# ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

**MDCCXCIV—MCMXXXIV**

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ

ՀԱՐՅՈՒՐՔԱՌԱՍՆԱՄՅԱ

ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Народный Комиссариат Просвещения ССРА

# АРМЯНСКАЯ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ

ПОЛЬНЫЙ КАТАЛОГ

АРМЯНСКИХ ГАЗЕТ и ЖУРНАЛОВ

(1794—1934)

Составил Г. Д. Левонян

Издательство Фонда Мелконян—Эривань 1934

---

Commissariat d'Instruction Publique de RSS d'Armenie

# PRESSE PÉRIODIQUE ARMÉNIENNE

CATALOGUE COMPLET

DES JOURNAUX ET DES REVUES ARMÉNIENS

(1794—1934)

par G. Dj. Lévonian

Publication de la fondation Melkonian—Erivan 1934

ՀՍԽՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

## ԼԻԱԿԱՏԱՐ ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ

## ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՈՐԵՐԸ

## (1794—1934)

Առաջաբանով, Ներածությամբ, Ծանոթություններով
յեվ Աղյուսակներով

Կազմեց ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ

ՅԵՐԵՎԱՆ 1934

Պետհրատի Տպարան
Գլավլիտ № 9249 (բ)
Պատվեր № 2384
Տիրաժ 1500

Տեխ. խմբ. Մ. Եփրիկյան
Սրբագրիչ. Գ. Լևոնյանի

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ա. Առաջաբան

բ. Ներածություն

1. Հիմնական նյութ. Մայր ցուցակ հայ լրագրության. ժամանակագրական կարգով. 1794—1934.

    Հայատառ-Թուրքերեն լրագրներ.

    Պարբերականների քանակական ցուցանիշը ըստ թվականների.

2. Պարբերականները ըստ հրատարակության վայրերի·
3. Ըստ բնույթի յեվ բովանդակության (աղյուսակ).
4. Հայ լրագրության խմբագրների յեվ հրատարակիչների այբբենական ցանկը.
5. Հայ տպարանները՝ ուր տպագրվել են մեր պարբերականները.
6. Ընդհանուր այբբենական ցանկ հայ պարբերականների.

    Ուղղումներ, լրացումներ.

# ԱՌԱՋԱԲԱՆ

ԳՈՐԾԻ ՁԵՌՆԱՐԿՈՒՄԸ.
Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ Պետական Գրապալատի Վարչությունից 1930 թ. հուլիս ամսին մեզ առաջարկություն յեղավ հանձն առնել բիբլիոգրաֆիական մի մեծ աշխատանք, այն է կազմել բովանդակ հայ ռագրության լիակատար ցուցակը, սկզբից մինչև մեր օրերը՝ յուրաքանչյուր պարբերականի հրատարակության տեղի, սկսվելու և դադարելու թվականների, նրանց խմբագիր-հրատարակիչների և տպարանների հիշատակությամբ։ Վորքան էլ վոր տեխնիկապես ծանր եր ամբողջ աշխարհում և զանազան ժամանակներում լույս տեսած բոլոր հայերեն թերթերի և հանդեսների մասին պահպանված տեղեկանքներն սպառիչ կերպով հավաքելու և խմբագրելու գործը, այնուամենայնիվ սիրով հանձն առանք այդ մանրակրկիտ աշխատանքի կատարումը, քանի վոր առաջին անգամը չե վոր մենք պիտի զբաղվեյինք հայ լրագրության հավաքումով և պատմությամբ, այլ անցյալում ունեյինք մի քանի տասնյակ տարիների ծանոթություն և փորձառություն։

Սակայն ծանոթությունն ու փորձառությունը դեռ ևս բավարար չեն, յեթե ձեռքի տակ չկան փաստական լրիվ նյութեր, այսինքն բոլոր այն թերթերն ու հանդեսները, վորոնք պիտի անցնեյին գործի մեջ, հաշվի առնվեյին իրապես։ Յեթե մեր հին մամուլի մասին համեմատաբար ավելի շատ գրական աղբյուրներ կան ու նրանց հավաքածուներից (թեև վոչ ամբողջական) գտնվում են մեր գրադարաններում, ապա դրությունը շատ խղճուկ և անմխիթար է նոր մամուլի վերաբերմամբ, մանավանդ 20-րդ դարի սկզբից մինչև Խորհրդային շրջանը։ Մեծ պատերազմի հետևանքով ու ճանապարհների կտրվածության պատճառով, ու այնուհետև քաղաքացիական կռիվների շրջանում, այդ ժամանակամիջոցի շատ թերթեր ու հանդեսներ կան, վորոնք կորսվել են իսպառ ու նրանց անունն է միայն մնացել։ Վոչ մի հիմնարկ չի մտածել հավաքել, մի տեղ կենտրոնացնել այդ պարբերականները ու նրանք այսօր ներկայանում են բիբլիոգրաֆիական մեծ արժեք։

Ահա այստեղ մեզ օգնության հասավ մեր անձնական գրադարանի հայերեն հին և նոր լրագրների հարուստ ժողովածուն, առանց վորի հնարավոր չեր գլուխ բերել այս աշխատությունը՝

*Այսպիսով մեզ իրական աղբյուրներ են ծառայել թերթեր ու հանդեսներ հետևյալ քանակությամբ և հետևյալ տեղերից.—*

| | | |
|---|---|---|
| *Մեր ժողովածուն* | *850* | *անուն* |
| *Միասնիկյանի անվան Պետ. Հանրային գրադարանից լրացված* | *75* | *անուն* |
| *Նույն Գրադարանի Հատուկ բաժնից* | *154* | » |
| *Հեղափոխության թանգարանից (այժմ Կուսպատի Ինստիտուտ)* | *46* | » |
| *Էջմիածնի գրադարանից* | *54* | » |
| *Ընդամենը* | *1179* | *անուն* |

*Մնացած պարբերականները մենք* աչքի առաջ *չենք ունեցել այլ նրանց մասին մեր տեղեկությունները քաղել ենք հետևյալ գրական աղբյուրներից՝*

Գալեմքեարյան Հ. Գ.—*Պատմություն Հայ լրագրության. (հատոր Ա. 1794—1860) Վիեննա, 1893-թ. (Այս հրատարակության Բ. հատորը լույս չի տեսել):*

Լևոնյան Գ. Զ.—*Հայոց պարբերական մամուլը, սկզբից մինչև մեր օրերը 1794—1894, Ալեքսանդրապոլ, 1895 թ.*

*Նույնի*—Армянская периодическая печать, историческая справка, «Братская Помощь», Москва, 1898.

*Նույնի—Լիակատար ցանկ հայ լրագրության (1794—1904) «Լույս» օրաց.-հանդես, Թիֆլիս, 1905 թ.*

Պոտուրյան Հ. Մ. Վ.—*Հայ մամուլը տասն և հինգ տարվան մեջ (1894—1909), Վենետիկ, 1910.*

Կարապետյան Հ. Ռափայել—*Լիակատար ցուցակ հայերեն լրագիրներու, վորոնք կը գտնվին Մխիթարյան Մատենադարանի մեջ. Վիեննա, 1794—1921. Հ. Ն. Ակինյանի հառաջաբանով, Վիեննա, 1924.*

*Բացի այս, հատ ու կտոր տեղեկանքներ հավաքել ենք Կ. Պոլսի և այլ տեղերի հանդեսներից, տարեցույցներից, գրացուցակներից և այլն:*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վերև հիշված բոլոր հրատարակություններից անուններով ամենից հարուստը Վիեննայի ցուցակն է, բայց* միայն անուններով. *կազմողը նեղություն չի կրել յուրաքանչյուր թերթի կամ հանդեսի մասին տալ բիբլիոգրաֆիայի պահանջած սպառիչ տեղեկությունները, յենթավերնագրերը, ում կողմից հրատարակված լինելը, խմբագիրը, տպարանը, ֆորմատն ու ծավալը: Անուններն էլ մեծ ստուգության կարոտ են. չկան շատ կարևոր պարբերականներ, բայց կան աշակերտական խմորատիպ կամ ձեռագիր թերթեր. կան չհրատարակված թերթեր: Հաճախ միևնույն հրատարակությունը գրված է երկու անգամ, կարծելով տարբեր, յերբեմն և չգիտական շփոթություն. օրինակ՝ «Բեթանիա» լրագիրը, հրատարակված Նիկոմիդիայում գրված է* չունենք, *իսկ նրա տակը գրված է միևնույն անուն լրագիր, հրատարակված նույն թվին Իզմիդում՝* ունենք, *չանդրադառնալով վոր Նիկոմիդիա և Իզմիդ միևնույն քաղաքն է ու լրագիրն էլ ուրեմն միևնույնն է: Վիեննայի Մխիթարյանները իրենց գրադարանում ունենալով հայ պարբերականների ամենից հարուստ ժողովածուն, ի վիճակի էին կազմել մի շատ ավելի լուրջ ցուցակ:*

## ՇՓՈԹՈՒԹՅՈՒՆ

Բիբլիոգրաֆիական այլ և այլ աշխատությունների, տեղեկատուների և գրացուցակների մեջ մեզանում հաճախ շփոթում են պարբերական մամուլի բաժինը, նրա մեջ մտցնելով ամեն տեսակի միանուն հրատարակություններ՝ համարներով կամ պրակներով հրատարակված. Այստեղ դուք կգտնեք յերգարաններ, (ինչպես «Սոխակ Հայաստանի» Բագու) կառավարական դեկրետների և գերատեսչական հրահանգների ժողովածուներ՝ պրակ առ պրակ հրատարակված, հանրամատչելի գրքույկների սերիաներ, վորոնք վոչ մի կապ չունեին լրագրության հետ։ Ներկա աշխատության մեջ չկան վոչ միայն այդ կարգի հրատարակությունները, այլ և չեն մտած՝

ա) Միօրյա թերթերը, վորոնք սովորաբար լույս են ընծայված միայն մի անգամ, հատուկ այս կամ այն տոնի ժամանակ, այս կամ այն որվա առթիվ, և իրենց վրա ել համար չեն կրում, շարունակվելու դիտավորություն չունենալով։

բ) Պատի թերթերը, թեկուզ և տպագիր։

գ) Ձեռագիր, խմորատիպ (հեկտոգրաֆ) թերթերն ու հանդեսները, վորոնք մեծ մասամբ արդյունք են այս կամ այն դպրոցի կամ հիմնարկի ներքին կյանքին. բայց, դրա հակառակ, մեր ցուցակում մտել են վիմագիր և մեքենագիր-ապակետիպ այն պարբերականները, վորոնք հասարակական կամ գիտական արժեք են ներկայացնում և տպագրությամբ չեն լույս տեսել կամ տվյալ վայրում հայկական տպարան չլինելու, կամ այլ պատճառներով։

դ) Հայաստան բայց ռուս լեզվով լրագրները՝ 21 անուն, (առանձնացած, տես էջ 170), քանի վոր նրանք հայերեն լեզվով չեն. բայց դրա հակառակ մտցրել ենք մի յատինատառ թերթ, քանի վոր նրա լեզուն հայերեն է։

ե) Օրացույցներ. յեթե նրանք միայն օրացույց են, մի քանի օրացուցային «այլ և այլքով». բայց յեթե այդ հրատարակությունները անունով են միայն օրացույց, բայց իրոք ներկայանում են վորպես գրական գիտական հանդես կամ ալմանախ, և օրացույցի բաժինը նրա մեջ շատ աննշան տեղ է բռնում, այդպիսիները մենք ընդունել ենք մեր ցուցակում։

## ԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՏԵՂԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ

Լրագրության կյանքի մեջ յեղել են այնպիսի յերևույթներ, յերբ լրագիրը կամ հանդեսը իր խմբագրության ցանկությամբ, կամ, ավելի հաճախ, յերկրի գրաքննչական օրենքների պահան-

ջումով անփոփոխ պահել է իր ուղղությունը, ծրագիրը. նույնիսկ խմբագրությունը մնացել է նույնը, բայց ինքը դուրս է յեկել նոր ձևով. այդպիսինները, բիբլիոգրաֆիական ընդունված կանոնով, համարվում են նոր հրատարակություն, նոր լրագիր, ուստի մենք այդպիսիններր ամեն անգամ գրել ենք իրենց թվականության տեղում, իհարկե հիշատակելով, վոր այդ թերթը կամ հանդեսը փաստորեն շարունակություն է այնինչ լրագրի։ Դրա հակառակ, յերբ թերթը կամ հանդեսը փոփոխում է իր հրատարակության վայրը, փոխադրվելով մի քաղաքից մի ուրիշ քաղաք, նույնիսկ փոխում է իր ծրագիրը, նաև իր ուղղությունը՝ խմբագրության հետ, փոխում է իր ծավալն ու ֆորմատը, կամ որաթերթից դառնում է շաբաթաթերթ՝ բայց պահում է իր անունը և արտոնատեր հրատարակիչը, այդպիսի պարբերականը մնում է նույնը։ (Մեր ցուցակում նայել «Հայկական Աշխարհ», «Երիտասարդ Հայաստան» և այլն՝ իրենց տեղի փոփոխումներով, և «Մասիս», «Ծաղիկ» և այլն՝ իրենց ամեն տեսակի փոփոխումներով)։

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Յուրաքանչյուր պարբերականի արտաքին պատկերն իսկությամբ ցուցադրելու համար մենք պահել ենք նրա ուղղագրությունը այն բոլոր տեղերում, ինչ բառացի որինակել ենք նրանից. իսկ փակագծի մեջ մեր կողմից ավելացրած կտորները, ինչպես և ծանոթությունները, իհարկե, գրել ենք մեր ներկայի ուղղագրությամբ։ Բայց վորպեսզի նույնանուն լրագրները այբբենական կարգի մեջ իրենց հին և նոր ուղղագրությունների պատճառով միմյանցից չհեռանան, մենք հարմար ենք համարել այդպիսինները պահել միասին, անտես առնելով նրանց սկզբի տառի փոփոխության յենթարկված լինելը, որինակ՝

«Երիտասարդ Հայաստան»
«Յերիտասարդ Մաճկալ»։

Նույնպես վարվել ենք և խմբագիրների ընդհանուր ցանկը կազմելիս, որինակ՝

Երեմեան Սիմոն
Յերեմյան Վահան.
կամ՝ Յովհաննիսյան Աբգար
Հովհաննիսյան Աշոտ։

Այս կետն ընդունելն անհրաժեշտ եր, մանավանդ, աչքի առաջ ունենալով այն դեպքերը, յերբ միևնույն անձնավորությունը թերթ է հրատարակել նախ քան նոր ուղղագրության մուտքը և նրանից հետո։ Ուրեմն, այդպիսինները, այժմյան այբբենական կարգով, միմյանցից կհեռանային բռնելով յերկու տեղ. որինակի համար —

Երզնկեան Արամայիս 1918 թվին և
Յերզնկյան Արամայիս 1924 թվին, և կատարվեր մի
անցանկալի շփոթություն։

## ԿՅԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց լրագրությունն ըստ հրատարակության տևողության ունեցել է հետևյալ պատկերը

| | |
|---|---|
| Մի կամ մի քանի համար հրատարակվել են . . | 176 անուն |
| Մր կամ մի յերկու ամիս . . . . . . . | 205 » |
| Մինչև մի տարի . . . . . . . . . | 346 » |
| » յերկու տարի . . . . . . . . | 189 » |
| » յերեք տարի . . . . . . . . | 135 » |
| » չորս տարի . . . . . . . . | 69 » |
| » հինգ տարի . . . . . . . . | 55 » |
| » վեց տարի . . . . . . . . | 28 » |
| » յոթ տարի . . . . . . . . | 29 » |
| » ութ տարի . . . . . . . . | 24 » |
| » ինը տարի . . . . . . . . | 16 » |
| » տաս տարի . . . . . . . . | 18 » |
| » 10–14 տարի . . . . . . . | 39 » |
| » 15–20 » . . . . . . . . | 19 » |
| » 21–30 » . . . . . . . . | 12 » |
| » 3_–40 » . . . . . . . . | 10 » |
| » 41–50 » . . . . . . . . | 6 » |
| » 51–60 » . . . . . . . . | 8 » |
| » 61–70 » . . . . . . . . | 1 » |
| » 71–80 » . . . . . . . . | 0 » |
| » 81–90 » . . . . . . . . | 0 » |
| » 91–100 » . . . . . . . . | 1 » |

*Մնացած պարբերականների տևողությունը մեզ անծանոթ։*

Յերկարակյաց պարբերականները
հետևյալներն են՝

*(Աստղանիշ ունեցողները մինչև այժմ էլ շարունակվում են).*

| | | |
|---|---|---|
| ՏԱՐԵՑՈՅՑ | Թիֆլիս . . . | 21 տարի |
| ԱՄԵՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ | Կ. Պոլիս . . . | 22 » |
| Ծ Ա Ղ Ի Կ | Կ. Պոլիս . . . | 23 » |
| ԲԻՒԶԱՆԴԻՈՆ | Կ. Պոլիս . . . | 23 » |
| Ժ Ա Մ Ա Ն Ա Կ | Կ. Պոլիս . . . | 25 » |
| ՆՈՐ-ԴԱՐ | Թիֆլիս . . . | 25 » |
| Ս Ի Ո Ն | Երուսաղեմ . . | 25 » |
| ԲԻՒՐԱԿՆ | Կ. Պոլիս . . . | 27 » |
| ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ | Թիֆլիս . . . | 29 » |
| Տ Ա Ր Ա Զ | Թիֆլիս . . . | 30 » |
| ԱՐԵՒԵԼՔ | Կ. Պոլիս . . . | 32 » |
| * ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ | Բոստոն . . . | 32 » |
| * ՄԻՈՒԹԻՒՆ | Կահիրե-Գահիրե . | 33 » |
| ԱՂԲԻՒՐ | Թիֆլիս . . . | 36 » |
| ՀԱՅՐԵՆԻՔ | Կ. Պոլիս . . . | 36 » |
| * ՀԱՅՐԵՆԻՔ | Բոստոն . . . | 36 » |
| ԱՐՄԵՆԻԱ | Մարսել . . . | 39 » |
| ԱՒԵՏԱԲԵՐ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ | Կ. Պոլիս . . . | 43 » |
| ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ | Զմիւռնիա . . | 42 » |
| * ԴՐՕՇԱԿ | Ժընև-Պարիս . | 44 » |

| | | | |
|---|---|---|---|
| * ԱՍՊԱՐԷԶ | Ֆրեզնո | 35 | » |
| * ՀՆՉԱԿ | Պարիս-Լոնդոն | 46 | » |
| ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ | Զմիւռնիա | 47 | » |
| Փ Ո Ւ Ն Ջ | Կ. Պոլիս | 47 | » |
| * ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ | Վիեննա | 48 | » |
| Մ Շ Ա Կ | Թիֆլիս | 49 | » |
| * ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵՑՈՅՑ | Կ. Պոլիս | 50 | » |
| ԱՐԱՐԱՏ | Էջմիածին | 51 | » |
| Մ Ա Ս Ի Ս | Կ. Պոլիս | 57 | » |
| ԱՒԵՏԱԲԵՐ | Կ. Պոլիս | 61 | » |
| * ԲԱԶՄԱՎԷՊ | Վենետիկ | 92 | » |

## ՏԻՐԱԺՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

*Ինչ ասել կուզե վոր շատ ցանկալի կլիներ յեթե մենք, մեր ցուցակում, հնարավորություն ունենայինք նշանակելու յուրաքանչյուր պարբերականի տիրաժը. այդ պահանջում է մեր ժամանակի բիբլիոգրաֆիան. բացի այդ պահանջից, մենք կիմանայինք տվյալ լրագրի կամ հանդեսի ինչ չափով տարածված և ժողովրդականացած լինելու կարեւոր հանգամանքը. բայց վճրաեղից պիտի քաշվեյինք այդ տեղեկությունները. յերբեմն միայն, անցյալ դարի կեսերից, մեր հանդեսների՝ տարվա վերջում տպագրած իրենց «արգո բաժանորդաց» ցանկերից կարող ենք իմանալ, վոր այդ բաժանորդների թիվը յերկու-յերեք հարյուրից չի անցել. իսկ հատավաճառի մասին այն ժամանակի խմբագիրները գաղափար չունեյին։ Գալով օրաթերթերին, նրանց տիրաժը 19-րդ դարի յերկրորդ կեսին հազիվ հասնում եր 400—700-ի *)։ Ամենատարածված լրագրները՝ Կովկասահայոց մեջ «Մշակը», «Նոր-Դարը» դարավերջին տպագրվում եյին 1200—1500 օրինակ։ Կ. Պոլսի ամենատարածված թերթերն այդ ժամանակ «Արեւելքը», «Բյուզանդիոնը» ավելի ընթերցողներ ունեյին, և հատավաճառն ել այնտեղ ավելի լավ դրության մեջ եր։ 20-րդ դարում, մինչև մեծ պատերազմը, մանավանդ պատերազմի ընթացքում, մեր լրագրների տիրաժը բարձրանում է զգալի չափով։ Թիֆլիսում Դաշնակցության «Հորիզոն» թերթի տիրաժը հասնում է մինչև 7—8 հազարի։ «Մշակը», այդ հինավուրց լրագիրը, տպագրում է միայն 3—4 հազար։ Կ. Պոլսում այդ ժամանակամիջոցում ամենից ավելի տարածված թերթերն եյին «Վերջին Լուր», ապա դաշնակցական և ռամկավարական թերթերը, հասնելով մինչև 8—10 հազարի։*

*Հայ լրագրությունը իր պատմության մեջ յերբեք տիրաժի այնպիսի բարձրացում չեր տեսել, ինչ տեսավ Խորհրդային Հայաստանում։ Գրագիտության տարածումով, տարածվում է և լրագրությունը։ «Խորհրդ. Հայաստան», «Մաճկալ», «Ավանգարդ»,*

---

**) Կ. Պոլսում Չամուռճյանի «Հայաստան»ն ունեցել է 250 բաժանորդ, Զմյուռնիայում Ա. Մուրատյանի «Հայրենասեր»-ը, սկզբում տպագրվել է մինչև 20 օրինակ, ապա հասել է 300-ի։*

«Երևանի Բանվոր» թերթերն իրենց տիրաժն հասցրել են մինչև 20 հազարի։

Հայ լրագրությունն ըստ պարբերականների, ներկայացնում է հետևյալ պատկերը։

| | |
|---|---|
| Տարեգիր | 77 |
| Կիսամյա (վեցամսյա) | 20 |
| Քառամսյա | 8 |
| Եռամսյա | 24 |
| Երկամսյա | 8 |
| Ամսագիր | 280 |
| Կիսամսյա (յերկշաբաթաթերթ) | 166 |
| Տասնօրյա | 54 |
| Շաբաթաթերթ | 289 |
| Հնգօրյա | 31 |
| Եռօրյա | 87 |
| Երկօրյա | 48 |
| Ամենօրյա | 173 |
| Օրը 2 անգամ | 2 |
| Անկանոն | 231 |
| Անծանոթ | 86 |

## ՆՅՈՒԹԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Ամենից առաջ մենք դրել ենք, այսպես ասած, Մայր-ցուցակը, ժամանակագրությամբ, սկսելով 1794 թվից մինչև 1930, ապա և, վորպես հավելված, մինչև 1934 թիվը ներառյալ։ Սակայն ըստ հաջորդական տարիների պահպանելով ժամանակագրական կարգը, մենք յուրաքանչյուր տարվա հրատարակությունները դասավորել ենք այբբենական կարգով. ինչու, վորովհետև հայտնի չե յեղել մեզ ամեն մի թերթի վոր ամսից կամ ամսի քանիսից սկսած լինելու հանգամանքը. դրա համար անհրաժեշտ պետք եր հայ լրագրության ամբողջական հավաքածուները մեր ձեռքի տակ ունեցած լինեյինք, այսինքն մի անկարելի բան։ Այբբենական դասավորումը գուցե և ունի մի առավելություն, վորոնած հրատարակությունը շուտ գտնելու համար. բայց ունի և այն թերությունը վոր, որինակ, Ա. տառով սկսվող վորևե պարբերական, վոր սկսել է հրատարակվել, ասենք, նոյեմբերից, ավելի առաջ է ընկել, քան Ն.-ով սկսվող մի լրագիր, վոր հրատարակվել է հունվարից կամ փետրվարից։ Այս բանը թող շփոթություն առաջ չբերե Ցուցակից ոգտվելիս։ Այն պարբերականները վորոնց եջերը, ֆորմատը (չափը) չի նշանակված, նշանակում է վոր այդպիսինները մեր ձեռքում չեն յեղել։

Երկրորդ տեղում մենք տալիս ենք հայ պարբերականներն ըստ հրատարակության վայրերի, դարձյալ պահպանելով ժամանակագրական կարգը, թե ըստ յերկրների և թե յուրաքանչյուր յերկրի մեջ առանձին քաղաքների։ Այսպիսով ակնհայտ է դառնում,

վոր 22 յերկրներից Հնդկաստանը առաջինն է իսկ Բելգիան վերջինը։ Մեր այս յերկրորդ ցուցակով կարելի է իմանալ նույնպես թե վոր յերկրում կամ այդ յերկրի վոր քաղաքում քանի պարբերական, և ինչ պարբերականներ են լույս տեսել։

Երրորդ տեղում առաջ բերած մեր աղյուսակը ցույց է տալիս մեր լրագրներն ըստ իրենց բնույթի ու բովանդակության, բաժանված 22 յերկրների միջև։ Այսպիսով յեթե կամենանք, որինակի համար, հետաքրքրվել մեր յերգիծաբանական հրատարակություններով, մենք այս աղյուսակի մեջ կտեսնենք, վոր նրանց գումարը հասնում է 84-ի և վորոնք, մեծ տոկոսով. 47 անուն, լույս են տեսել Թյուրքիայում։

Չորրորդ տեղում մենք բերում ենք ամբողջ հայ լրագրության խմբագիրների և հրատարակիչների այբբենական ցանկը։ Այստեղից յերևում է թե միևնույն անձնավորությունը քանի լրագիր է խմբագրել կամ հրատարակել. նույել համապատասխան համարները ըստ Մայր-ցուցակի։

Հինգերորդ տեղում մենք բերում ենք ցանկը բոլոր այն հայ տպարանների, ուր տպագրվել են մեր պարբերականները։ Այստեղ ըստ քաղաքների առաջին տեղը իր քանակով բռնում է Պոլիսը, ապա Թիֆլիսը ապա Պարիզը, Յերևանը և այլն։

Վեցերորդ տեղում մենք կազմել ենք բոլոր հայ պարբերականների ցուցակը՝ այբբենական կարգով։ Վորևէ լրագիր վորոնելու համար պետք է նայել այս ցանկի մեջ ու դեմը գրված թվանշանով Մայր-ցուցակում գտնել նրա անունը։

Այս ցուցակից յերևում է թե ինչ անուն լրագրներ ենք ունեցել ամենից շատ և վոր քաղաքներում են հրատարակվել այդ թերթերը, և կամ այդ անվան առաջնությունը վոր քաղաքին է պատկանում։

Յոթներորդ և վերջին տեղում մենք գրել ենք այն ուղղումները և լրացումները վորոնք նկատել կամ իմացել յենք աշխատության տպագրելու ընթացքում։

## ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր ներկա աշխատությունը տպագրության հանձնելով, մենք այն կարծիքին չենք վոր անթերի է մեր կատարած գործը. ընդհակառակը իր տեսակի և ընդարձակության մեջ առաջինը լինելով, նա անպայման կունենա և ունի իր զգալի բացերը։ Մենք, և մեզանից ավելի շատ, հայ մատենագիտությունը պիտի յերախտապարտ մնա այն ամեն մի դիտողության, սրբագրումի և լրացումի համար, վոր կստացվեն դրսից, ապագայում նման մի աշխատության նոր հրատարակությունը համեմատաբար ավելի լրիվ լույս ընծայելու համար։

Մենք կոչ ենք անում մեր գրադարաններին, այս ցուցակով առաջնորդվելով, հավաքել, քանի շատ ուշ չէ, զանազան տեղերում և մասնավոր անձերի մոտ գտնված հայ լրագիրները, կարգի բերել իրենց մոտ գտնված բոլոր պարբերականները, դյուրություն ընձեռելու և սպասարկելու մեր անցյալ ու ներկա կյանքն ուսումնասիրող բանասերներին ու գրականագետներին։

Վերջում թող թույլ տրվի մեզ հրապարակորեն շնորհակալություն հայտնելու Մյասնիկյանի անվան Պետ. Հանրային Գրադարանի Դիրեկցիային, Էջմիածնի Պետական Մատենադարանի տեսուչ Սենեքերիմ Տեր-Յակոբյանին, Հեղափոխության Թանգարանի (այժմ Կուսպատի Ինստիտուտ) աշխատակից Սուրեն Զոլյանին, Հանրային Գրադարանի աշխատակից Մուշեղ Գասպարյանին և Պետ. Գրապալատի աշխատակից Հայկանույշ Սարգսյանին, վորոնք սիրալիր և անձանձրույթ կերպով ամեն անգամ մեզ մատչելի դարձրին իրենց հիմնարկներում գտնված այն բոլոր հայ պարբերականները, վորոնց պետքը մենք զգում էինք լրացումներ և ստուգումներ կատարելու համար։

Գ. Լ.

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՅԱԼԸ

## ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Տպագրության գյուտից հազիվ վաթսուն տարի անց, 1512 թվին լույս տեսավ առաջին հայերեն գիրքը, Վենետիկ քաղաքում, Հակոբ անունով մի հայ մարդու ջանքերով։ Ո՞վ է յեղել այդ Հակոբը, մինչև այժմ դեռ պարզված չէ, բայց հավանական է, վոր նա յեղած լինի սոսկ մի առևտրական, վորպիսիներն այդ ժամանակում պակաս չեն յեղել Իտալիայի վաճառաշահ քաղաքներում՝ գաղթած Ջուղայից և այլ կողմերից։ Ազգը լուսավորելու կամ տպագրության գյուտի բարիքներից օգտվելով հայ ժողովրդին ծառայելու փափագը չէ յեղել անշուշտ Հակոբի գլխավոր նպատակը. Նրա՝ այդ թվականներին միմիանց հետևից տպագրված մի քանի գրքերը՝ (Պարզատումար, Աղթարք, Ուրբաթագիրք) ցույց են տալիս վոր ինքը Յեվրոպայում նստած, փոխանակ մի ավելի կարևոր բան հրամցնելու յուր սիրելի ազգին յեվ ճոյրենյաց, վերցրել տպագրել է միջնադարյան ավելորդապաշտության ձեռնարկներ ու վաճառքի հանել, թեկուզ արդեն ազատության մեջ խարխափող ժամանակի սակավաթիվ հայ ընթերցողների միտքն ավելի մթագնելու պատճառ դառնալով։ Սակայն, ինչ էլ վոր լինի, յեթե իր դարի պահանջների հանգամանքներով էլ արդարացնելու չը լինենք մեղապարտ Հակոբին, նա, այնուամենայնիվ, պատվավոր տեղ ունի գրավելու հայ տպագրության պատմության էջերում, այդքան վաղ հրապարակ հանելով հայերեն գրքեր *)։

Նույն դարում յերկու նոր տպագրիչներ են հանդես գալիս դարձյալ Վենետիկում՝ Աբգար Թոքատեցի և Հովհաննես Տերզենցի, վորոնցից Աբգարը տպագրում է յերկու գիրք՝ Ուրացույց և Սաղմոսարան (1564—65), Հովհաննեսը՝ Տումար Գրիգորեան Ցուիտենական և Սաղմոսարան. (1584—87)։ 1587-ին Աբգար Թոքատեցին գնում է Կ. Պոլիս և հիմնելով առաջին հայկական տպարանը լույս է ընծայում Փոքր Քերականություն կամ Այբբենարան և, մինչև դարավերջը, դարձյալ չորս գիրք.

Հետևյալ 17-րդ դարում հայերեն գրքերի տպագրությունը համեմատաբար ավելի ծաղկում է. բացի Վենետիկից և Պոլսից ուրիշ տեղեր էլ գրքեր են լույս տեսնում թե՛ օտար տպարաններից և թե հիմնվում են հայ տպարաններ։ Ահա այն քաղաքները, ուր այդ դարում տպագրվել են զանազան բովանդակության հայերեն գրքեր Լեմբերգ (Լվով) 1616 թ., Հռոմ՝ 1623-ին, Միլան՝ 1624-ին, Պարիզ՝ 1633-ին, Նոր-Ջուղա՝ 1640-ին, Լիվոռնո՝ 1643-ին, Ամստերդամ՝ 1655-ին, Զմյուռնիա՝ 1676, Լայպցիգ՝ 1680, Պադուա՝ 1690-ին։

Ինչպես տեսնում ենք նախնական շրջանում հայ տպագրության գործը ծնվել է հեռավոր յերկրներում, գաղութներում առանց բացառության. Պոլիսը, Իզմիրը, Նոր-Ջուղան վորքան էլ հայաշատ վայրեր՝ գաղութներ եյին և շատ եյին հեռու հայ բնաշխարհից, յուր հողի կամ արհեստի հետ կապված աշխատավորական զանգվածներից։

Այդպես շարունակվում է և հետևյալ 18-րդ հարյուրամյակում, փոքրիկ բացառությամբ. Նորանոր հայ տպարաններ են հիմնվում, կամ օտար տպարաններից հայերեն գրքեր լույս տեսնում՝ Անգլիայում 1736-ին, Հնդկաստանում 1772 ին. իրանց տպարաններն են հիմնում նաև Մխիթարյանները Տրիեստում՝ 1776 թվին ապա և Վենետիկի ս. Ղազարու կղզում 1788-ին։

---

*) Ռուսերեն առաջին գիրքը, տպագրված քաղաքացիական տառերով լույս է տեսել Ամստերդամում 1699 ին Պետրոս Մեծի թույլտվությամբ։ Վրացերեն առաջին տպարանը բացված է Պետերբուրգում, 1705 թվին, ապա Թիֆլիսում 1709 թ ին։

Գ. Լեոնյանը՝ վոր իր գրադարանում ուներ Հակոբի տպագրած հիշյալ վերին աստիճանի հազվագյուտ գրքերը, մոտ անցյալում ընծայաբերեց Խորհրդային Հայաստանի Հանր. Գրադարանին։ Տես՝ «Կարմիր Աստղ» 1922 թ. № 130. ԽՄԲ.։

Ի՞նչ դրության մեջ էր մեզ հետաքրքրող գործը Ռուսաստանում։ Յեթե հայ վաճառականները Արևմտյան Յեվրոպայում դեռ 16-րդ դարի սկզբներից գրքեր եյին տպագրում, ինչպես և վոր նույնպիսի հայ առևտրականները վոր ավելի վաղ կամ ուշ Մոսկվայի շուկայում խոշոր գործեր եյին անում և մեծամեծ արտոնություններ ստանում կառավարությունից իրենց առևտուրը և արդյունաբերությունը ծաղկեցնելու համար, չէին մտածել Ռուսաստանում էլ գրքեր հրատարակել։ Մեզ թվում է թե նրանք հանդիպած կլինեն նույն «կայսերական բարեխնամ կառավարության» արգելքներին։ Միայն Յեկատերինե Բ-ի որով Հովսեփ արքեպ. Արղությանին՝ վոր Ռուսաստանի հայոց առաջնորդն էր, և լավ հարաբերության մեջ էր կայսրուհու հետ, հաջողվում է արտոնություն ստանալ հայկական տպարաններ հիմնելու. առաջին տպարանը բացվում է Պետերբուրգում 1783-ին, Ջուղայեցի Գր. Խալդարյանի ծախքով, յերկրորդը Նոր-Նախիջևանում՝ 1787-ին, և յերրորդը Աստրախանում՝ 1796-ից։ Դարձյալ գաղութներ։

Առաջին տպարանը Հայաստանի հողի վրա, բուն Արարատյան յերկրում, հիմնվում է 1771-ին, Եջմիածնում, յերբ դեռ այդ վայրը գտնըվում էր Պարսիկ խաների «խնամակալության տակ» ու չէր միացած ցարական Ռուսաստանին։

Ի՞նչ էր անում նույն խնդրի առնչությամբ Թիֆլիսը՝ հետագայում ռուսահայոց մտավոր կենտրոն դարձող այդ հինավուրց քաղաքը։ Յեթե Ռուսաստանում այդքան ուշացել է հայ տպագրության գործը «ինչ ինչ հանգամանքներով», յեթե նույնիսկ խանական Եջմիածնում է տպարան հիմնվել 18-րդ դարում, ինչու է ուշացել հայ գիրքը Վրաստանում, ուր հայերը դեռ հին դարերից միշտ էլ լի են յեղել՝ և Թիֆլիսում գրեթե չեն զգացել ոտարություն։

Վախթանգ 6-րդը յեթե դեռ 1712-ին հանճարեղ Ռուսթավելցու պոեմն էր հրատարակում իր գիտական մեկնություններով, ու խրախուսում ամեն մի կուլտուրական աշխատանք, ինչու ժամանակի տեղացի հայերը, հապաղել են հայերեն գրքի տպագրության գործի մեջ—այդ մնում է անբացատրելի։ Նրանք բավականացել են Վենետիկից, Պոլսից, Հռոմից և այլ հեռավոր տեղերից ստացվող, իրենց համար անհարազատ գրականությամբ։ Յեվ այսպես շարունակել է մինչև հետևյալ դարի 20-ական թվականները, յերբ Վրաստանն արդեն միացված էր Ռուսաստանին, մինչև վոր Թիֆլիսում, 1823-ին, վանեցի Գևորգ Արծրունու ջանքերով, բացվում է առաջին հայ տպարանը, վորը ապա ընծայվում է Ներսիսյան դպրոցին։

Թիֆլիսին հետևում են Անդրկովկասյան մի քանի քաղաքներ, հիմնելով տպարաններ և հրատարակելով գրքեր, Շուշի՝ 1832-ին, Բաքու՝ 1872-ին, Ալեքսանդրապոլ՝ 1876-ին և այլն։ Հեռավոր գաղութներում՝ նույնպես նորանոր տպարաններ են հիմնվում՝ Յերուսաղեմ՝ 1832, Ամերիկա՝ 1854, Յեգիպտոս՝ 1865, Ռումանիա՝ 1877-ին և այլն։

Այսքանը թռուցիկ կերպով տպարանների մասին. այժմ անցնենք մեր բուն նյութին՝ լ ր ա գ ր ու թ յ ա ն ը։

---

Վերևում ասացինք վոր Հնդկաստանում հայ տպարան հիմնվել է 1772-ին։ Այդ տպարանի կազմակերպողը Մադրաս քաղաքում, 18-րդ դարի մեջ իր քաղաքական ծրագրներով ու գործունեյությամբ հայտնի, Սուլթանում Շահամիրյանն էր, վոր տպագրեց մի շարք գրքեր։ Մադրասում նույն դարի յերկրորդ կիսում բավականաչափ հայեր կային բարեկեցիկ վիճակի մեջ և այդ գաղութը 1784-ին Շիրազից բերել է տալիս մի քահանա՝ Հարություն Շմավոնյան, վորպես «հոգևոր հովիվ Մադրասի հայոց»։ Ահա այս շիրազեցին, բարյերեվույթին ժամանակի հասկացողությամբ մի կուլտուրական մարդ, չբավականանալով իր «հոգևոր հովվի» պաշտոնով, քաղաքում հիմնում է իր սեփական տպարանը և հրատարակում մի քանի հայերեն գրքեր կրոնական, փիլիսոփայական և պատմական բովանդակությամբ։ Շմավոնյանը տեսնելով Հնդկաստանում հրատարակվող անգլիական ամսագրերը՝ մ ա գ ա զ ի ն ն ե ր ը, ինքն էլ միտք է հղանում սկսել մի նման հայերեն պարբերական հանդես։ Այսպիսով Շմավոնյանը դառնում է ա ռ ա ջ ի ն հայ խմբագիրը, 1794-ին հոկտեմբեր-16-ին Մադրասում լույս ընծայելով «ԱԶԴԱՐԱՐ» անունը կրող ամսագրի առաջին հա-

մարը, մեզանից հարյուր քառասուն տարի առաջ *)։

«ԱԶԴԱՐԱՐԸ» վոր նվիրված եր «բարեպաշտ պարոնաց և մաքրակենցաղ տիկնանց Մադրասիս Հայոց», գրաբար եր. այսպես եր ժամանակի գրականության յեթե վոչ պահանջը, գոնե սովորությունը։ Շմավոնյանը անշուշտ չեր կարող բավարարվել Մադրասի «բարեպաշտ պարոններով» կամ «մաքրակենցաղ տիկիններով». այդ փաղաքշական խոսքերը նրա կողմից մի տեսակ հաճոյախոսություն եյին իր հարուստ ծախականների հասցեյին. նա իր ամսագիրը տարածել ե շատ ավելի հեռավոր վայրեր. Կ. Պոլիսը, Ն. Նախիջևանը, Եջմիածինը տվել են նրան բաժանորդ ընթերցողներ. Նույնիսկ Հովսեփ Արղության յեպիսկոպոսը՝ Ռուսաստանից, Սահիան Գուլամիրյանը՝ Յերևանից աշխատակցել են այդ առաջին հայ պարբերականին։ Սակայն յերկար կյանք չի ունենում «ԱԶԴԱՐԱՐ»-ը. հրատարակվելով 18 տետր, դադարում ե 1796-ին։

Յերեք տարի անց, 1799-ին, Վենետիկի Մխիթարյան տպարանից Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ, սկսում ե տարին մի անգամ լույս տեսնել Տարեգրություն անունով աշխարհաբար պարբերականը, նվիրված «քաղաքական պատերազմական, յեկեղեցական, բանասիրական անցից և դիպվածոց աշխարհի»։ Այս յերկրորդ հայ լրագիրն էլ հրատարակվելով չորս գիրք, դադար ե առնում 1802 ին։

Նույն Ինճիճյան վարդապետը Վենետիկում, հետևյալ 1803 թվից, սկսում ե հրատարակել Եղանակ Բիւզանդեան կոչվող տարեգիրը, վոր տևում ե մինչև 1820 թիվը։ Եղանակ Բիւզանդեանը պարունակում եր յուր մեջ «գուշակութիւնք փոփոխութեանց լուսնո, փոխանակութիւնք յեղանակաց, աստեղաց դիրքին, մետեորական մարմնոց». ուներ նաև քաղաքագիտական բաժին, աշխարհաբար լեզվով տպագրելով մանր պատմություններ, առակներ և այլն։

1812 թվին Պոլսում կազմվում ե «Արշարունյաց ընկերութիւնը», վորի նպատակն ե լինում «ազգի մեջ ընթերցանություն տարածել, հրատարակելով գրքեր ու լրագրներ»։ Ահա այդ ընկերությունը վորոշում ե մի լրագիր հրատարակել, բայց վոչ Պոլսում, այլ Վենետիկում, վարդապետների ձեռքով։ Յեվ 1812 թվին Ս. Ղազարի մամուլի տակից լույս ե տեսնում Դիտակ Բիւզանդեան լրագիրը «ի խնդիր ընկերութեան Արշարունեաց»։ Այս կիսամսյա լրագրի առավելությունը իր նախորդներից այն եր վոր խմբագրվում եր զուտ ժողովրդական լեզվով, կամ ինչպես խմբագրությունն ե ասում, «ռամկորեն», վորպեսզի հասկանալի լինի վոչ միայն «գրոց» մարդկանց, այլ և ավելի լայն շրջաններին։ Դիտակ Բիւզանդեանն ուներ քաղաքական բաժին, ուր տպագրում եյին թարգմանական հոդվածներ ու տեղեկություններ Նապոլեոն Բոնապարտի աշխարհակալական սխրագործությունների մասին։ Պոլսում Արշարունյաց ընկերությունը իր գոյության հինգերորդ տարին դեռ չբոլորած, դադարում ե գործելուց, 1816-ին դադարի մատնելով և իր հանդեսը՝ Վենետիկում։

Հետևյալ հայ պարբերականը վոր հինգերորդն եր ժամանակագրությամբ, լույս ե տեսնում Աստրախանում 1815 թվին։ Ի՞նչ հրատարակություն եր այս շաբաթաթերթը. և կարո՞ղ ե նա համարվել ռուսահայոց անդրանիկ օրգանը։ Այդ հարցին պատասխանելու համար կարևոր ե այստեղ մի փոքրիկ պատմություն։ Դեռ 18-րդ դարից Հիսուսյան կամ Ճիզվիտ կոչվող լատին կրոնավորները Յեվրոպայում հալածվելով, նրանցից մի խումբ յեկել եր Ռուսաստան և նույն իսկ վայելում եր Պավել Ա-ի հովանավորությունը։ Ճիզվիտները նախ Թեոդոսիա քաղաքը բնակվելով, հետագայում, անցնում են Մոզդոկ և ապա՝ վերջնականապես հաստատվում Աստրախանում, ուր այդ ժամանակներում բազմաթիվ հայեր կային բարեկեցիկ վիճակի մեջ։ Յերկու հայ ճիզվիտ՝ Աղաջանյան և Շահվերդյան, քաղաքում բաց են անում դպրոցներ. մեկը «ազնվական տղոց համար»՝ գիշերօթիկ, մյուսը «ռամիկ» յերեխաների համար, ձրի։ Աղաջանյան-Շահվերդյան դպրոցների պարզ նպատակն յեղել ե վոչ թե «ազգի լուսավորությունն ու կրթու-

*) Ահա մի ցանկ վորը ցույց ե տալիս թե ուրիշ ազգերի մեջ յերբ ե սկիզբ առել լրագրությունը.

| | | | |
|---|---|---|---|
| Իտալիա | 1563-ին, | Շվեդիա | 1644-ին, |
| Ֆրանսիա | 1605-ին, | Ռուսաստան | 1703-ին, |
| Շվեյցարիա | 1609-ին, | ՀԱՄՆ | 1804-ին, |
| Ավստրիա | 1610-ին, | Հունաստան | 1821-ին, |
| Գերմանիա | 1612-ին, | Թուրքիա | 1825-ին, |
| Անգլիա | 1622-ին, | Ռումանիա | 1828-ին, |
| Սպանիա | 1626-ին, | Սերբիա | 18·1-ին |

և այլն։

թյունը», այլ իրանց ճիզվիտական, հավատորսական պրոպագանդը, կամենալով «ներգործել հայ հասարակության վրա», վոր այդ ժամանակ քաղաքի ամենաուժեղ տարրն էր կազմում տնտեսապես։ Աստրախանում, ինչպես տեսել ենք վերևում, 1776-ից հայոց տպարան կար, վորը իր գոյությունը հասցրել է մինչև 1840 ականները։ Ըստ յերևույթին ճիզվիտները չեն կարողացել մուտ ունենալ այդ տպարանը. նրանք գնացել են վոմն Վայսքնոֆեն ոտարականի 1813 թվից բաց արած ռուստպարանը, ուր հրատարակվում էր „Восточное Известие“ անունով մի փոքրիկ շաբաթաթերթ։ Ահա կղեմես Շահվերդյանը, «վերատեսուչ Հաշտարխանի Հայկազն կաթոլիկաց ճիզվիտական դպրոցի», իր պրոպագանդը տպագրության միջոցով էլ տարածելու նպատակով, հայերեն տպարանական տառեր է պատրաստել տալիս մի «քաջ հայ արհեստավորի» և 1815-ից հրատարակում Ծանուցմանց Տաքարարեր անունով կես-հայերեն կես-ռուսերեն մի լրագիր։ Մենք չենք տեսել այդ թերթը և չգիտենք նրա կյանքի տևողությունը. բայց կարծում ենք յեղած պիտի լինի շատ կարճատև, վորովհետև նույն 1815-ին Ալեքսանդր Ա.-ի հրովարտակով Ռուսաստանի բոլոր քաղաքներից՝ հետևապես և Աստրախանից, դուրս քշվեցին ճիզվիտները։ Ուրեմն Ծանուցմանց Տաքարարերը ռուսահայ առաջին լրագիրը կարող է համարվել լոկ իր բիբլիոգրաֆիկ նշանակությամբ՝

1830-ականներին լույս է տեսնում Թյուրքիայում, Կ. Պոլսում առաջին հայ լրագիրը պաշտոնական հանգամանքներում՝ այսպես՝ Վոմն Ա. Բլակ, 1831-ին, սկսում է հրատարակել „Moniteur Ottoman“ (Ազդարար Ոսմանյան) ֆրանսերեն թերթը, վորպես Բ. Դռան պաշտոնական որգան։ Հետևյալ 1832-ից կարևոր է համարվում մի պաշտոնաթերթ էլ հրատարակել պետական, թյուրքերեն լեզվով, վորի անունը դնում են Թագվիմ Վագայի։ Ահա այս թերթի խմբագրությունը, որ առաջ հայտնում է հայերեն հայտարարությամբ «ի գիտություն մայրաքաղաքի հայ բազմաթիվ հասարակության», վոր շուտով հրատարակվելու է նաև հայերեն լրագիր։ Այս խոստումը իրականանում է շուտով և թյուրքերեն թերթի 12-րդ համարի հետ լույս է տեսնում «Լրոյ գիր Մեծի Տէրութեանն Օսմանեան» պարբերականը, վորը սակայն հարատև կյանք չունենալով, հետագայում փոխվում է Ցայտարար ապա և Սուրհանդակ Բիւզանդեան անուններին։

Ամերիկայի բողոքական քարոզիչները յեկել բուն էյին դրել Թյուրքիայի ծովափնյա քաղաքներում, այն տեղի քրիստոնյաներին, գլխավորապես հայերին, նորից քրիստոնեացնելու, «լույս հավատքի» բերելու «բարձր առաքելությամբ»։ Յեվ «ավետարանական լույսը» քարոզելու յեկած «հայ յեղբայրներն» իրանց պրոպագանդի համար 1839-ին Զմյուռնիայում (Իզմիր) հիմք են դնում «Շտեմարան Պիտանի Գիտելեաց ամսագրի հրատարակության։ Ահա ինչ լեզվով է խոսում Շտեմարանի խմբագրությունը հայ ընթերցողների հետ.—«Ասանկ գործեր հողագնդիս յերեսի վրա ամէն լուսավոր ազգերու ու յերկրներուն մեջ ալ կան հիմա... ուրեմն ինչու համար հայոց ազգին քաջ, մշակյալ, հարուստ և զարդարուն լեզուն մենակ մնա... Մեր Շտեմարանը աշխարհաբար լեզվով պիտի ըլլա. գրաբար լեզվին գերազանց ճոխությանը և գեղեցկությանը վրա տգետ չենք, բայց քանի վոր անոր լեզուն ազգին մեծ մասը չի հասկնար, արժան դատեցանք, վոր մեր Շտեմարանը ռամկորեն ըլլա»։

Ամերիկական դոլլարներով ապահովված, բողոքական դավանական քարոզներն անուշ կլլեցնելու համար, Շտեմարանի խմբագրությունը ծախսերի առաջ կանգ չեր առնում, թերթը նույն իսկ ձրի տարածելով. և վորպեսզի միալար կրոնական-աստվածաբանական որորներով ձանձրալի չը դառնան, ճարպիկ խմբագիրները Շտեմարանի էջերում, մեջ ընդ մեջ, տալիս էյին գիտական տեղեկություններ և հետաքրքրելի նյութեր։

Շտեմարան Պիտանի Գիտելեացը Իզմիրում շարունակում է իր կանոնավոր հրատարակությունը մինչև 1842 թիվը, ապա հետևյալ տարիներում մի քանի համար միայն հրատարակվելով, 1854-ին տեղափոխվում է Պոլիս, 1855-ին վերակոչվում Աւետաբեր, Շտեմարան պիտանի գիտելեաց և պահում է իր գոյությունը ամբողջ 60 տարի։

Մինչև այժմ մեր հիշած պարբերականները կամ եպիզոդիկ բնույթ ունեյին ու կարճատև կեանք են ապրել և կամ, յեթե յերկար տարիներ շարունակվել են, նրանք յեղել են հոգևոր պրոպագանդի համար հատկացված դումարների վորդեգիր։ 1840 թվին Զմյուռնիայում Ղուկաս Պալտազարյանը հիմնում է Ար-

շալոյս Արարատեան բանասիրական և առևտրական լրագիրը, որ հանդիսանում է առաջին իսկական քաղաքական-հասարակական հայ թերթը։ Շատ շուտով Պալտազարյանի լրագիրը լայն համակրություն է հանդիպում թե իր գործունեությամբ և թե բազմազան կարևոր հոդվածներով ու թղթակցություններով։ Թյուրքիայի մեծ քաղաքներից, գավառներից զատ, այս թերթը սկսում է տարածվել Կովկասի, Հնդկաստանի, Պարսկաստանի հայերի մեջ, մտավոր կուլտուրական կապ հաստատելով նաև հեռավոր գաղութների հետ։ Բարոյական հաջողության հետ թերթը ունենալով նյութական բավարար միջոցներ, հիմնում է իր սեփական տպարանը, որը սակայն կրակի է մատնվում 1855-ին Իզմիրում պատահած մեծ հրդեհի ժամանակ։ Պալտազարյանի մահից հետո Արշալոյս Արարատեանի հրատարակության իրավունքներն անցնում են իր որդուն, և թերթը շարունակում է լույս տեսնել Հարություն Սրվանձյանի խմբագրությամբ մինչև 1887-ը, յերբ թուրք կառավարությունը բանդարկում է խմբագրին։ Սրվանձյանը բանտից ազատվում է հիվանդ և հյուծված ու մեռնում է. Արշալոյսն էլ դադարում է ընդ միշտ, ունենալով 47 տարվա յերկարատև կյանք։

1843 թվին լույս է տեսնում այն հանդեսը, որ իր յերկարամյա գոյությունը պահել է մինչև այսօր և ներկայումս հայ պարբերականներից ավագագույնն է իր 92 ամյա հասակով. դա Վենետիկի Մխիթարյանների բանասիրական-գրական Բազմավէպ ամսագիրն է։ Բազմավէպը որպես — հայագիտական, ակադեմիկական հանդես, պետք է ասել, ներկայումս անբավարար է նկատվում. «գրական» հանդես էլ չի կարողանում դառնալ, որովհետև նրա խմբագրությունը հեռավոր մի վանական անկյունում նստած, հայ գրողներից կտրված է, և չի էլ ճանաչում նրանց։ Այս հանդեսն անցյալում ուներ իր պատկառելիությունը յերբ Ս. Ղազարում ապրում էին Բագրատունիներ ու Ալիշաններ...

Նույն 1843 թվից Իզմիրում Նոր-Նախիջևանցի Խ. Մելիքսեթումյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել Հայրենասէր քաղաքական, բանասիրական և առևտրական կիսամսյա լրագիրը, որ շարունակվելով հինգ տարի, դադարում է 1848 թվին։

1845-ին Կալկաթայում Արարատյան ընկերության միջոցներով սկսվում է հրատարակվել Մեսրոպ Թաղիաթյանի Ազգասէր անունը կրող «քաղաքական, տնտեսական, բնական և բարոյական գիտելյաց շաբաթաթերթը»։ Այս հանդեսը սկզբում աշխարհաբար լեզվով էր հրատարակվում, հետո «ըստ ցանկության պատվելի ընթերցողաց», վերածվում է գրաբարի. առհասարակ գրաբարին ջերմ պաշտպան էին հնդկահայերը իրենց «բարձր դասերով»։ Թաղիաթյանի հանդեսը, ժամանակին նայելով, կարող է համարվել լուրջ հանդես, իր մեջ պարունակող և խնամքով խմբագրված նյութերով։ Յերեք տարի անց, 1848-ին, Արարատյան ընկերությունը դադարում է գործելուց, իսկ Թաղիաթյանը մասնավոր նպաստներ ստանալով վերսկսում է իր հանդեսը՝ կոչելով Ազգասէր Արարատեան։ Սակայն նյութական միջոցները շուտով սպառվում են. խմբագիրը մի կոչ է հրատարակում թե Հնդկաստանի թե հեռավոր հայերին դիմելով. Իզմիրի Արշալոյս Արարատեանն էլ օգնության ձայն է բարձրացնում, բայց նորից ստացված միջոցները հազիվ մի տարի բավականանալով, այս հնդկահայ ամսագրի գոյությունը դադարում է 1852 թվին։

1846 թիվը նշանակալի է դառնում հայոց մամուլի մեջ այն տեսակետից, որ այդ տարի լույս է տեսնում առաջին հայ լրագիրը Կովկասում, ճիշտ նույն տեսակի պաշտոնական հանգամանքներում, ինչ որ առաջին թերթը՝ Պոլսում։ Իշխան Մ. Վորոնցովը Կովկասի կառավարչապետ նշանակվելով, ձգտում է իր յերկիրը դնել «կուլտուրական նոր հունի» մեջ։ Ճարպիկ դիվանագետը կամենալով գրականության և գեղարվեստի միջոցով ամրապնդել միապետության հիմքերը ծայրագավառում, Թիֆլիսում հիմք է դնում թե լրագրության և թե թատրոնի. յերկու նշանավոր նորություններ։ 1846-ին սկսում է հրատարակվել ռուսերեն պաշտոնական „Кавказъ“ լրագիրը վոմն Կոստանդինովի խմբագրությամբ։ Բուրժուական պատմաբանների արտահայտությամբ «ուսումնասեր և բարի» կառավարչապետը ցանկանում է որ այդ լրագրին զուգընթաց նման թերթեր հրատարակվեն Թիֆլիսում նաև վրացերեն, հայերեն և թուրքերեն լեզուներով։ Ինչպես է լինում, վրացերեն թերթը լույս չի տեսնում, իբր հարմար խմբագիր չճարվելու պատճառով. թուրքերենի համար տպա-

բանական տեխնիկական արգելքներ են առաջ յեկել. իսկ հայերի համար նույն 1846-ին լույս է տեսնում Կովկաս լրագիրը, խմբագրությամբ Հակոբ Կարենյանի և Միք. Պատկանյանի։ Կովկասահայ այդ անդրանիկ լրագիրը իր չոր ու ցամաք պաշտոնական տեղեկություններով և, մանավանդ, գրաբար լեզվով շատ չէր կարող ընթերցողներ գրավել։ Յերբեմն միայն թերթի բանասիրականի (գծի տակ) բաժնում տպագրվող «բարոյական պատմությունները», կամ գավառական բարբառներով տպագրված հոդվածները կարող էին քիչ շատ տաքացնել լրագրական դեռևս ամայի և սառը միջավայրը։ Կովկասի բաժանորդների թիվը հասնում է մինչև 300-ի, (անշուշտ վոչ բոլորովին կամավոր բաժանեգրված), բայց և այնպես, նա չըկարողանալով արմատ գցել հայ իրականության մեջ, հետևյալ 1847-ին դադարում է։

Դեռ մինչև 50-ական թվականներն հասնելը լույս են տեսնում դարձյալ մի քանի թերթեր՝ Կ. Պոլսում 1846-ից Տերոյան-Զամուռճյան Պատմելու Հայաստանը, վոր գրեթե Ազգային ժողովի պաշտոնաթերթն էր, տեվում է մոտ 7 տարի, յեռանդուն կռիվ մղելով բողոքականների Ավետաբերի դեմ, Վիեննայում 1847 թվից Մխիթարյանների Եվրոպա քաղաքական և ուսումնական շաբաթաթերթը, վոր տեվում է 16 տարի։ Յերկու լրագիր էլ լույս է տեսնում Հնդկաստանում. մեկը Մադրասում Բանասեր տասնորյա՝ վիմատիպ հանդեսը, մյուսը Սինկափուրում, Ուսումնասեր յերկշաբաթաթերթը։ Հետաքրքրական տիպ է յեղել վերջինիս խմբագիրը՝ Գրիգոր Գալստանյանը։ Ուսումնասերն ունենում է միայն 30 բաժանորդ, վորոնցից 7-ը Սինկափուրում՝ 23-ը այլ քաղաքներում։ Գալստանյանը 30 բաժնեվճարով աշխատում է «քաղաքական, գրագիտական և առևտրական գիտելիքներ» տարածել «իր ազգի և հայրենյաց մեջ». բայց յերբ տեղական անգլիերեն թերթերից լսում է, վոր Ավստրալիայում ինչ վոր քաղաքի մոտ վոսկու հանքեր են գտնվել, և այնտեղ գնացողները հարստանում են, իր Ուսումնասեր թերթում քարոզում է, վոր հայերը շտապեն գնալ Ավստրալիա և որ առաջ տեր կանգնեն վոսկու հանքերին։ Գալստանյան ուսումնասերը տեսնելով վոր հայերը տեղից չեն շարժվում, թերթի 1853 ի մայիս 27-ի համարում (վոր վերջին համարն է լինում), գրում է հետևյալ ուշագրավ տողերը.

—«Քանի վոր վոչ վոք չի կամենա հեռանել մերոցս ազգասեր և բարեմիտ հորդորականաց... ուստի և մենք, ի սեր ազգիս և հառաջադիմության նորին՝ հուսացյալ ի խնամս և յողորմության նախախնամողին մերոյ, ստանձնեցաք զայս դժվարին ճանապարհորդությունն»։ Յեվ այսպես Գալստանյանը փակելով իր խմբագրական խանութը, թռչում է Ավստրալիա, հարստություն դիզելու «ի սեր ազգի և յառաջադիմության նորին»։

Մեր համառոտ տեսությամբ հասանք 19-րդ դարի յերկրորդ կեսը, 50-ական թվականները, առաջին կեսից հիշատակելով յերկու տասնյակ պարբերականներ։ Այսուհետև կխոսենք միայն այն թերթերի և հանդեսների մասին, վորոնք այս կամ այն չափով, այս կամ այն ուղղությամբ վորոշ քաղաքական, հասարակական դեր են խաղացել մեր իրականության մեջ, և կամ, ժամանակի հասկացողությամբ, «արժանի ծառայություն» են ցուցաբերել մտավոր զարգացման բնագավառում։

1850—1860-ի միջոցներին նոր հիմնված պարբերականներից յեթե միայն անցողակի հիշենք Գաբրիել Պատկանյանի Թիֆլիսում հիմնած Արարատ աշխարհաբար շաբաթաթերթը (1850—51) վորպես Կովկասի յերկրորդ հայ պարբերականը և առաջին հանդեսը, իր համեստ գրական բաժնով՝ և ուր առաջին անգամ իր գրչի փորձերը տպագրում էր խմբագրի վորդին բանաստեղծ Գամառ Քաթիպան, ապա Պոլսում Հիսարյանի Բանասեր ամսաթերթը (1851–59) վորպես լուրջ հրատարակություն, չէն կարող կանգ չառնել Ոսմանյան մայրաքաղաքում Կարապետ Իթյուճյանի 1852-ից հիմնած հռչակավոր Մասիս լրագրի վրա, վոր արևմտյան հայերի մտավոր հասարակական կյանքի վրա մեծ ներգործություն է ունենում ամբողջ 60 տարի։ Խմբագիր-տնորեն Իթյուճյանն ավելի ազատամիտ էր և համբերատար դեպի այլադավան հայ հոսանքները, չունենալով Հայաստանի և Ավետաբերի կրոնամոլ ուղղությունը։ Ժամանակի լավագույն գրական-հրապարակախոսական ուժերը խմբված էին այդ որաթերթի շուրջը, զարգացնելով արևմտահայ գրական լեզուն ու գրական բոլոր սեռերը։ Թերթի արտոնատերը միշտ մնալով Իթյուճյանը, Մասիսը հետագայում բազմաթիվ խմբագիրներ է փոխում, ինքն էլ ըստ ձևի ու ծավալի, յերբեմն որաթերթ, յերբեմն շաբա-

*թաթերթ, ապա գիտական գրական հանդես դառնալով։*

*Դարձյալ անցողակի հիշելով Պոլսի* Նոյեան Աղաւնին՝ (*1852*) *և Իզմիրի* Արփի Արարատեանը (*1853*), *որոնք թեև արժանի են ուշադրության իրենց քիչ-ավելի լիբերալ ուղղությամբ, բայց նվազ ծանոթ իրենց կարճատև կյանքի պատճառով, կանգ առնենք Մկրտիչ վ. Խրիմյանի հանրածանոթ* Արծվի Վասպուրական *ամսագրի վրա, որի առաջին համարները լույս են տեսնում Պոլսում 1855-ին։*

*Մկրտիչ Խրիմյանը 1857-ին Պոլսին հրաժեշտ տալով վերցնում է տպագրության իր պարզ մեքենան, թուղթ և այլ պարագաներ ու դառնում Վասպուրական, գործելու։*

*Համատարած խավար, անհատակ տգիտություն, «հոգևոր դասի» ապիկարություն, ծույլ, անհոգ, ժողովրդի վզին նստած ու նրա հաշվին ապրող անարժան միաբանական խմբեր վանքերում, որոնք «հավատացյալ հոտից» ստանալ գիտեյին ամեն ինչ՝ ամենայն առատությամբ, բայց փոխարենը ոչինչ չունեյին տալու։ Ահա այն միջավայրը, որ յերիտասարդ Խրիմյանը տեսնում է իր հարազատ բնաշխարհում... Ինքը, յերգիծանքով շատ լավ նկարագրում է այդ վանականների կյանքը.*

*«Ուտեմք բրդիս և զմառաղ, զխորոված գառան կարմրած,*
*Ուտեմք զճաշ, զխաշխաշ իւղն ի վերա լիճ լիճ լցյալ·*
*Ուտեմք զկաթն մաքրյալ և զմածունն սերակալ,*
*Ուտեմք զանհալին կարագ և ձողուց մեղր զհետ նորա՝*
*Ուտեմք և յափրանամք ննջեմք ի խուց, խորտամք անհոգ...*

*«Խավարը փարատելու» յերեք գլխավոր միջոցներ ուներ վանեցի յերիտասարդ գործիչը՝ կենդանի խոսք՝ որ է քարոզի ընդունակություն պարզ ոճով ու յերգիծական համեմունքներով, յերկրորդ՝ ազգու գրիչ, և յերրորդ՝ տպագրական մամուլ։ Վարագի վանքում նա հաստատում է իր տպարանը և 1858-ից լույս ընծայում* Արծվի Վասպուրականին: *Սա սոսկ վանական հրատարակություն չեր, այլ արծարծում եր նաև հասարակական վորոշ խնդիրներ։*

*«Կգա արդյոք մի օր, ասում եր Խրիմյանը, յերբ մեր գյուղացին հանգիստ կերպով վայելե իր հալալ աշխատանքը և այս յերկրում տիրե արդարություն և խաղաղություն։ Կգա արդյոք մի օր, յերբ մեր այս ձորերում, ուր միայն ավազակների հրացանի տրաքոց է լսվում, լավի յերկաթուղու շոգեկառքի սուլոցը և մենք ել ունենանք հեռագիր, պոստ, դպրոցներ, համալսարան...»։*

*1850-ականներին ծնունդ առնող հայ պարբերականների թվում ուշադրության արժանի յեն Ստեփան Ոսկանի Պարիսում հրատարակած* Արեւելք (*1858*) *և* Արեւմուտք (*1859*) *թերթերը, ապա դարձյալ Պարիսում 1855-ից հրատարակվող* Մասեաց Աղաւնի *հայերեն-ֆրանսերեն պատկերազարդ ամսագիրը, վորը չորս տարուց հետո իր խմբագիր Գաբրիել վ. Այվազովսկու հետ տեղափոխվում է Թեոդոսիա, դառնալով հայերեն-ռուսերեն յերկշաբաթաթերթ, և տևելով մինչև 1865 թիվը։ Նույն շրջանին են պատկանում Զամուռճյանի* Երեւակ *կրոնական ուսումնական և բանասիրական ամսագիրը Պոլսում (1857—67), Սվաճյանի՝ ապա Պարոնյանի խմբագրությամբ հրատարակվող* Մեղու *յեռօրյա յերգիծաբանական թերթը, (1856—74), Թիֆլիսում Ստ. ք. Մանդինյանի հիմնած՝ ապա Պետրոս Սիմոնյանին անցած արխի պահպանողական* Մեղու Հայաստանին, *(նախ շաբաթաթերթ վերջը օրաթերթ), վորը տևում է մինչև 1886-ը։ 50-ական թվերին են սկսվել նաև Մոսկվայի յերկու ամսագրերը, Մսեր Մսերյանի* Ճռաքաղը՝ *գրաբար (1858—62) և Ս. Նազարյանի հռչակավոր* Հիւսիսափայլը *(1858—64)։ Վերջին յերեք պարբերականներից առաջին յերկուսը* Մեղուն *և* Ճռաքաղը *գաղափարակիցներ եյին, և ունեյին պահպանողական, կղերական ուղղություն, մինչդեռ* Հիւսիսափայլը *հայտնի է վոր լիբերալ, առաջադիմական ուղղության մի օրգան եր, ուր 60-ականներին մոտիկ աշխատակցություն ունեյին Միք. Նալբանդյանը և Ս. Շահազիզ։*

*Ստ. Նազարյանն իր* Հիւսիսափայլ *ամսագրով հանդիսանում է ռուսահայ մտավոր զարգացման վերածնության անդրանիկ գործիչներից մեկը. նա յեղել է հրապարակախոս յեվրոպական իմաստով։ Նազարյանը իր հայացքներով ու գաղափարներով շատ նման է Խ. Աբովյանին. նա ջերմ նախանձախնդիր եր հայերեն լեզվի զարգացման և պահպանման, հանդեպ օտար լեզուների ազդեցության. ինչպես և քրիստոնեյությունը, «ավետարանական լույսը» համարում եր մայր և ակիզբ ամեն մի դաստիարակության։*

*«Ամեն ազգ իր յեկեղեցու, իր հավատի վորդին է և իր մտածելիքների ամբողջ նյութը*

*կրոնապաշտականից ունի աղբյուրացած ... կրոնը ամենայն ազգերի դաստիարակիչ մայրը լինելով, այլ և հիմն (ե) ամենայն ազգային լուսավորության»—գրում է Նազարյանը, ինքը ևս հարմար է տեսնում իր աշխատանքը «հիմնել ու հաստատել կրոնի վրա»։*

*Ահա այսպիսի մտքերն են անցյալ դարի կեսերին մեր հրապարակախոսության մեջ համարվել «լուսամիտ և ազատ գաղափարներ»։ Յեվ զարմանալի է վոր* Ճառաճաղը *և* Մեղուն *Ս. Նազարյանի այսպիսի գաղափարների համար նրան կոչում էին «բողոքական, լյութերական»։* Հյուսիսափայլի *խմբագիրը չերևի ապացուցելու համար վոր ինքը «լյութերական» չե, այլ մաքուր «հայ-լուսավորչական», վոր Եջմիածինը և նրա կաթողիկոսը իր համար շատ թանգ են, ունի Մատթեոս Ա-ին նվիրած մի հոդված։ «Մատծող հայերի հույսերը և արդարացի ակնկալությունքը ներկայումս» վերնագրի տակ նա իր մի շարք սպասելիքներն ու ակնկալությունները թվելով «Նախախնամականի ձեռքով հայոց ազգին շնորհված հայրապետից», այսպես է վերջացնում իր խոսքերը. «Ահա այն մեծ և հոյակապ խորհուրդները, վորոնց պիտո է սպասավորե մի խոհական, վսեմամիտ, բարձրահայաց Հայրապետ լուսավորչական աթոռին .. քաջահույս է ազգը. վոր հայկական յեկեղեցու մեծ քահանա Մ ա տ թ ե ո ս ը խելամուտ լինելով... և այլն. Կեցցե Մ ա տ թ ե ո ս մեծ քահանա. վասն Հայոց բարեբախտության կեցցե» («Հյուսիսափայլ», 1859 № 7)։*

*Շատ ավելի հետաքրքրական մտքեր ունի արտահայտած Ս. Նազարյանն իր մի նամակում հայոց լեզուն կորսվելու վտանգի և ռուս մայրաքաղաքում հայ ուսանողների «ռուսացման» մասին։*

*«Ես որին ենք հասել մենք, վոր ամեն ազգ իր լեզվով կարող է լավ և վատ ուսմանց ու գիտությանց հասնել, բայց հայը վոչ. և որ ըստ որև գնալով գնալով քանդվում է մեր հայոց տունը... մեր հայրենի յերեխաները վորոնք գալիս են այստեղ (Մոսկվա) պարտական են առաջ ռուսանալ, վոր ապա ռուսերենովը ուսում առանալ... հայոց պատվական մանկունք ռուսաց ձեռքում ավերվեցան և ավերվում են ամեն օր. այնպես վոր սոցա միջը մի քար կապես շուրջը ձգես՝ խեկի ազգի համար կորուստ չեր»։ («Նոր Հոսանք» 1913 № 4—5)։*

---

*Թեվակոխում ենք վաթսունական թվականները. այս տասնամյակում (1860—70) լույս են տեսել ավելի քան 50 անուն նոր պարբերականներ, բայց նրանցից շատ քիչերն են վոր պիտի հիշվեն մեր այս համառոտ տեսության մեջ։ Թյուրքիայի մայրաքաղաքում փադիշահի, «հայոց ազգին շնորհած Ազգային Սահմանադրության» ազատությունից հարբել ու խենթացել էին պոլսահայերը, ազգայնության մարմաջով բռնվել։ Այս շրջանում եր վոր բանաստեղծները յերգել են՝*

*Մեր աշխարհն է սուրբ, մեր հողին վրա*
*Աստված է քայլեր որհնելով զԱդամ,*
*Մեր լեզուն ստեղծել ու խոսել նախ ինք...*

*Յեվ այս շրջանում տեղից վերկացողը մի թերթ եր հրատարակում. մի յերկու համարում իր հրճվանքն արտահայտում և դադարեցնում։ Սունկի նման դուրս թափվող լրագրների մասին չխոսելով, մենք պարտավոր ենք արժանի գնահատությունը տալու մի քանի լուրջ և հասարակական-գրական արժեք ունեցող պարբերականներին թե Թյուրքիայում և թե Կովկասում։ Այս տեսակետից, ըստ ժամանակագրության, առաջին տեղը բռնում է 1860 թվից Թիֆլիսում հրատարակվող* Կռունկ Հայոց Աշխարհի *ամսագիրը, նվիրված «ազգային բարոյական լուսավորության»։ Խմբագիրը՝ Մարկոս Աղաբեկյան. ինքը պոլսեցի, ծաղրի է յենթարկում Պոլսի նորելուկ և որապակաս շատ թերթերի անունները, այսպես բացատրելով իր ամսագրի համեստ անունը—«Միթե չկար ինձ համար մի այլ շքեղաշուք, պերճապանծ և մեծահամբավ անվանակոչություն. միթե չեյի կարող անվանել ինձ* Նոյան Տապան, Արձագանք Հայրենյաց, Հառաչանք Հայաստանի *և կամ* Եփրատ Դրախտաբուխ... *Յես հայոց կռունկն եմ, հայի կենդանի պատկերն եմ... այս է իմ պանդխտության և շրջանառության գլխավոր խորհուրդը...»։ Աղաբեկյանի հանդեսը առաջին հայ ամսագիրն եր Կովկասում. նա իր շուրջն է հավաքում ժամանակակից գրողներին և թե քննադատներին։ Այստեղ աշխատակցում են Մ. վ. Խրիմյան, Գարեգին Մուրադյան, Գ. վ. Սրվանձտյան, Պ. Պռոշյան, Գամառ Քաթիպա, Ս. Պալասանյան, Մ. Մամուրյան և շատ ուրիշներ։ Հետեվյալ տարիներում կանոնավոր կերպով հրատարակվում է* Կռունկը *և դադար առնում 1863-ի վերջին, յերբ խմբագիրն ստիպված է լինում գնալ Կ. Պոլիս։*

Վոչ այնքան իր քաղաքա-հասարակական նշանակությամբ, վորքան իր յերկարակեցությամբ պետք ե հիշել Պոլսում 1860 թվականից Համբարձում Ալաճաճյանի խմբագրությամբ հրատարակվող Փունջ լրագիրը, վորը կարելի ե ասել հանդիսանում ե դեղին մամուլի ներկայացուցիչ։ Շարունակվում ե մինչև 1907 թիվը, վերջում դառնալով գրական շաբաթաթերթ։

Իրենց հեռավորությամբ և մանավանդ կարճատև կյանքով մեր հասարակական գրական միջավայրի մեջ հիշատակության արժանի գործ չեն կարողացել հայտարարել Ռուսաստանի մայրաքաղաքներում այդ ժամանակներում հրատարակվող յերկու նոր լրագրները՝ Ձ. Մսերյանի Մոսկվայում հիմնած Համբաւաբեր Ռուսիո շաբաթաթերթը (1861—64) և Պետերբուրգում Ռ. Պատկանյանի Հիւսիսը (1863—64)։ Շատ ավելի ազդեցիկ դեր ե կատարում Կորեն Ստեփաննեյի Հայկական Աշխարհը, վոր 1864-ին սկսվելով Թիֆլիսում, հետագայում իր խմբագրի հետ շրջում ե Շուշի, Գանձակ, Բագու, Յերևան, հրատարակվելով վորպես ամսագիր մինչև 1879 թիվը։ Այս հանդեսը Մ. Աղաբեկյանի Կռունկ Հայոց Աշխարհի ամսագիրն եր, վոր անցնելով Ստեփաննեի ձեռքը, նախ կոչվում ե Կռունկ Հայկական Աշխարհի, ապա և կռունկը դուրս գցելով, դառնում ե Հայկական Աշխարհ, այն ես «ամսագիր գրական-մանկավարժական»։ Ստեփաննեն նոր մարդ եր, ռուսական համալսարանական կրթությամբ, «նոր հովերով», ու անպատճառ նորություն տված լինելու մեծ ցանկությամբ։ Նազարյան լիբերալիզմի յերկրպագու, նա «տրամագծորեն հակառակ» ուղղություն վորդեգրեց կոնսերվատիվ բանակի դեմ, վորն ե Մեղու Հայաստանի լրագրի շուրջը խմբված «ազգամոլ—կղերամիտ կուսակցության»։ Ի՞նչ խնդիրներ եր դնում հրապարակի վրա իր ամսագրի եջերում ուսումնական վարդապետը. «աշխարհաբար լեզվի մշակումը, հոգևորական դասի մեջ կանոնավոր ընտրություն, ծանոթություն յեվրոպական կյանքին և գրականության, հայկական թատրոնի բարեվայել զարգացում, ժողովրդական առողջապահություն, ուսուցիչների կատարյալ կացություն, հայ մայրերի կրթություն, մայրենի յեկեղեցու բարեկարգություն և... Հայաստանեայց ս. յեկեղեցուն ցմահ հավատարմություն»։ Ահա «խոշոր գործերի» և «լավ-լավ ցանկությունների» մի մեծ շարան, վորի կետերից և վոչ մեկին դեմ չեր Ստեփաննեյին հակառակ «կուսակցությունը»։ Հայկական Աշխարհի խմբագիրը յերևի ցույց տալու համար վոր ինքը շատ ազատամիտ ե և Պետ-Սիմոնյանին կամ Մ. Աղաբեկյանին հավասար մարդ չե, իր ամսագրի մեջ մտցնում ե նոր ուղղագրություն, յերևի աշխարհաբար լեզուն «մշակելու» իր խոստումը կատարելու համար։ Բոլոր ո-երը գրում ե օ-ով, «յ» կիսաձայնը բառերի վերջում վերացնելով և վ հնչյունին ամեն տեղ վ գրելով՝ եկավ, մերձավօր, յետօ, ծօվ և այլն։ Ինչ ել վոր լինի, Հայկական Աշխարհը վորպես «օպոզիցիա» խիստ պահպանողական Մեղուին և նրա կուսակցության, վորոշ թարմություն ե մտցնում կովկասահայ գրական հասարակության շրջաններում։ Գրիգոր Արծրունին ել իր ուսանող ժամանակ այդ հանդեսի մեջ ե փորձում իր հրապարակախոսական ուժերը։

Մի ուրիշ վարդապետ, թերևս ավելի լուրջ նկարագրով քան Ստեփաննեն, վաղուց «խռովել» եր Ներսես Աշտարակեցուց և փախել Կ. Պոլիս. դա Կարապետ Շահնազարյանն եր. Պոլսից ել անցել եր Պարիս, տպարան հաստատել, ու առաջին անգամը լինելով, լույս եր ընծայում հայ պատմագիրների մի շար։ Շահնազարյանը Ֆրանսիան ել թողնելով հաստատվում ե Անգլիայի Մանչեստր քաղաքում, ուր այն ժամանակ հայ գաղութն ավելի ծաղկած եր քան Պարիսում։ Ահա այստեղ 1863-ից նա սկսում ե հրատարակել Երկրագունտ քաղաքական գրական գիտական, կրոնական և առևտրական թերթ։ Սակայն գիտնական վարդապետին չի հաջողվում «յերկու տերանց ծառայել». վո՞ր աշխարհումն եր տեսնված, վոր մի լրագիր լինի և կրոնական և առևտրական։ Երկրագունտը մի տարում 59 համար հրատարակվելուց հետո դադարում ե, տխրություն չպատճառելով վոչ խմբագրին և վոչ ել մանավանդ նրա սակավաթիվ բաժանորդներին։

Մի տարուց ավելի չի կարողանում տևել նաև հայտնի աշխարհագրագետ և բանահավաք Գարեգին վ. Սրվանձտյանի Արծվիկ Տարոնոյ ամսագիրը, վոր 1863-ից լույս եր տեսնում Վասպուրական Արծվի տպարանում, Մուշ։ Համեմատաբար ավելի յերկար կյանք ե ունենում Յերուսաղեմի միաբանության 1866-ին հիմնած Սիոն ազգային բանասիրական գր-

գիտական և քաղաքական ամսագիրը, հրատարակվելով նախ Տիգրան Սավալանյանի, ապա Մելք. Վ. Մուրադյանի և վերջը Գարբ. Վ. Խապայանի խմբագրությամբ, և տևելով մինչև 1877 թիվը։

Դարձյալ մի մի տարի չեն ապրել, սակայն ուշադրության արժանի կյանք ունեցել Ստ. Ք. Մանդինյանի Գարուն ամսագիրը Թիֆլիսում (1866) և Մարկ. Աղաբեկյանի Ծիլն Ավարայրի ազգային, գրական, բանասիրական և մասնավոր լուսավորության հանդես՝ Պոլսում (1866)։ Վերջինիս խմբագիրը Կռունկի ժամանակ Թիֆլիսում գտնվելով ու լավ ծանոթ լինելով կովկասահայ կյանքին և մանավանդ ցարական կառավարության պաշտոնյաների ոտնձգություններին դեպի «հայ ազգային իրավանց» սահմանները, Պոլսում հնարավորություն է ունենում իր հանդեսում տպագրել մի շարք մերկացուցիչ փաստական վավերաթղթեր՝ գեներալ Պասկևիչի և իշխ. Բեհբուդովի նամակները։

Յերուսաղեմի հայ Միաբանության Սիոնը նախանձը շարժում է Էջմիածնի Միաբանության և ահա 1868 թվից Գևորգ դ. կաթողիկոսը հիմք է դնում այստեղ Արարատ «կրոնական, բարոյական, պատմական, բանասիրական և ազգային» ամսագրի, որը հետագայում դառնում է «Մայր Աթոռոյ պաշտոնական օրգանը», իր գոյությունը հասցնելով մինչև 1918 թվականը։ Արարատը իր հիսունամյա կյանքով հասարակական մտավոր զարգացման վրա նըկատելի ազդեցություն չունեցավ։ Բայց և յեղել են տարիներ, որ Արարատը լուրջ գիտական-ակադեմիական շրջաններ է ունեցել, իր էջերում տպագրելով Գալուստ Մկրտչյանի, Կ. Կոստանյանի, Մ. Մալխասյանի, Մ. Աբեղյանի, Ս. Կանայանի, Հ. Աճառյանի, Հ. Ադոնցի, Կարապետ, Մեսրոպ, Գարեգին, Կոմիտաս, Յերվանդ վարդապետների նման հայտնի բանասերների ուսումնասիրությունները։ Արարատը իր ծալքերում պարունակում է հարուստ նյութեր, որոնցից օգտվել կարող է և գրականագետը և պատմագիր ազգագրագետը և լեզվաբանը։ Ջանադան թերթս և վստանավորճի Փինաճյան սարկավագների հետ մենք տեսնում ենք այնտեղ և Ղազ. Աղայանին և Հով. Հովհաննիսյանին։

Մտնում ենք յոթանասնական թվականները. այս տասնամյակում (1770—80) քանակը քիչ, բայց որակը բարձր է նոր յերևացող հայ պարբերականների, համատարապես թե արևելյան թե արևմտյան հատվածներում։ Բեռլինից աշխարհի հզորների՝ Հայոց ազգին «շնորհած» տխրահռչակ 61-րդ հոդվածը դարձյալ մեծ վրդովմունք է առաջ բերում լայն հասարակական շերտերում։ Րաֆֆին իր Խենթը էր լույս ընծայում, Գամառ Քաթիպան իր Ազատ Երգերը. տիրում էր համատարած ազգային ռոմանտիզմ։

Այս շրջանումն էր որ մանր-բուրժուական և բուրժուական լիբերալ գրողները մտրակում էին հայ ազգային ցեցերին, վաշխառուներին ու կուլակներին. Սունդուկյանը լեռ հանելով իր Պեպոն ազնիվ կինտոյին բարձր էր դասում անազնիվ վաճառականից ու աղայից։ Հայ հասարակական-քաղաքենիական շերտավորումները ավելի խմբվում էին և ամրապնդում «կուսակցությունները»։ Պահպանողական կուսակցության գլխավոր օջախը Կովկասում, Պետր. Սիմոնյանի Մեղու Հայաստանի հրապարակի վրա էր, ինչպես և համանման ուղղություն ունեցող Մասիսը Պոլսում և Արշալույս Արարատյանը Իզմիրում։ Առաջադիմական ազատամիտ մտածողության Հյուսիսափայլի, Հայկական Աշխարհի հովերով սնված մտավորականները, հիմնում են իրենց լրագիրները հակահարված տալու նրանց։ Պոլսում 1870 թվից Մ. Մելիքյան սկսում է հրատարակել Հայրենիք ազգային գրական և քաղաքական օրագիրը, իսկ յերկու տարի անց, Թիֆլիսում, Գրիգոր Արծրունին հիմնում է Մշակ լրագիրը։

Մշակը Կովկասահայ լրագրության մեջ խոշոր տեղ է գրավում թե իր նվաճումներով ու ազդեցությամբ և թե յերկարատև գոյությամբ, մոտ հիսուն տարի։ Հիմնադիրը Գր. Արծրունին, անվանի հրապարակախոսը, խմբագիր-հրատարակչի պաշտոնը վարում է ամբողջ քսան տարի, մինչև իր մահը՝ 1892 թվին։ Հետևյալ 1893 թվից թերթի խմբագիր է դառնում Ալ. Քալանթարը, այդ պաշտոնը վարելով նույնպես քսան տարի, մինչև իր մահը՝ 1913 թվին։ Յերրորդ շրջանում թերթի խմբագրի, շուտով և հրատարակչի բոլոր իրավունքներն անցնում են Համբարձում Առաքելյանին, որ Քալանթարի ժամանակ համարվում էր յերկրորդ խմբագիր։ Առաքելյանն էլ վարում է իր պաշտոնը մինչև իր մահը՝ 1918-ը, որից հետո Մշակը մի առժամանակ դադարելով, նորից

չերևում է վորպես ժողովրդական կուսակցության օրգան՝ Լեոի խմբագրությամբ։ Տեվելով դարձյալ 2 տարի, հինավուրց թերթը վերջնականապես դադարում է 1921 թվի փետրվարին, Խորհրդային զորքերը Թիֆլիս մտնելու նախորյակին։

Ի՞նչ նորություն է բերում Մշակը և նրա խմբագիրը։ Դեռ 60-ական թվականներին, իր ուսանող չեղած ժամանակ, Մեղու և Հայկական Աշխարհ լրագիրներին ուղարկած հոդվածներով Գր. Արծրունին շոշափում է այսպիսի հարցեր. «Բնական գիտությունների նշանակությունը դաստիարակության մեջ», «Աղջկերանց դաստիարակությունը», «Գերդաստանի ազդեցությունը և համալսարան» և այլն։ Վերջին հոդվածում Արծրունին այն միտքն է հայտնում, վոր յերեխաները պետք է կրթվեն իրենց ընտանիքից հեռու, նրանց ճնշումից ազատ, նույնիսկ ավելորդ է գտնում Թիֆլիսում համալսարան հիմնելը։ Այդ շատ լավ, բայց քիչ հետո յերեխաներին անպատճառ ծնողներից հեռացնելու քարոզը կարծես մոռանում է և իր՝ «Յերիտասարդներին խրատ» հոդվածում ասում է վոր այդ «յերեխաները» գնում են հեռու յերկրներ այլևս չեն ուզում վերադառնալ։ «Յեթե դուք, սիրելի յերիտասարդներ, ուսում առնելուց հետո դիտավորություն չունիք վերադառնալ ձեր հայրենիքը, գործ չունիմ ձեզ հետ...» այսինքն «դուք կորած եք հայրենիքի համար»։ Հայրենիքի համար սիրտը ցավող հրապարակախոսն ունի և այսպիսի գոհար. «յես վոչ մի ազգության չեմ պատկանում, յես կրոնական մի սեկտայի անդամ եմ միայն, ուրիշ վոչինչ» (Մշակ 1880 № 164. «Իմ խոստովանությունը»)։

Յոթանասնական թվականներին սկսված օրաթերթերի մեջ միակ Մշակն է վոր առանձին տեղ է գրավում մեր մամուլի և հրապարակախոսության պատմության մեջ. իսկ հանդեսներ յերևում են մի քանիսը, Իզմիրում Մատ. Մամուրյանի հիմնած Արևելեան Մամուլ լուրջ հանդեսը, վոր 1781-ից անընդհատ հրատարակվում է մինչև 1901 թվականը, ապա անցնելով հիմնադրի վորդուն՝ Հրանտ Մամուրյանին շարունակում է մինչև 1908-ը, Վաղարշապատում՝ գիտնական Վահան վ. Բաստամյանի Դպրոց առաջին մանկավարժական ամսագիրը, վոր տևում է միայն յերկու տարի. Կ. Պոլսում՝ Հմ. վ. Դիմաքսյանի Լոյս (1874—1885) Թիֆլիսում՝ Արգ. Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակվող Փորձ յեռամսյա, և ապա ամսօրյա ստվար ալմանախ—հանդեսը (1876 81), և,վերջապես,Մոսկվայում՝ Զ. Մսերյանի Փարոս Հայաստանի պատկերազարդ հանդեսը. (1879–81)։

---

Ի՞նչ է բերում հայ մտավոր հասարակական կյանքին 80-ական թվականների լրագրությունը։ Այս տասնամյակում ավելի ևս ամրանում, ծավալվում են 70-ականներին գոյություն ունեցող մ շ ա կ ա կ ա ն, մ ե ղ վ ա կ ա ն «կուսակցությունները»։ Մշակը դառնում է օրաթերթ և նրան հակառակորդներ են դուրս գալիս Թիֆլիսում Արգ Հովհաննիսյանի Արձագանքը (1881) և մանավանդ Ստ. Սպանդարյանի Նոր Դար (1884)։ Մշակական, Ճորդարական բանակռիվները, էջմիածնական-յեկեղեցական-քահանայական-տիրացուական խնդիրները գրավում են այդ թերթերի ամբողջ ուշադրությունը և այդ ուղղությամբ ել լարում են քաղքենիական ճահճացած խմբակցությունների միտքը վոչ միայն Թիֆլիսում, այլ և գավառներում ու գաղութներում։ Քահանաների կրկնամուսնության հարց, հասի-չհասի խնդիր, տիրացուների ապահովության խնդիր, յերեցփոխների և հոգաբարձուների վարքն ու գործունեյությունը ահա մի շարք «կարդինալ» խնդիրներ, վորոնցով զբաղվում է այդ ժամանակվա մամուլը։ Կաթուղիկոսական, պատրիարքական և նման «լուրջ» հարցերում Նոր Դարին թև ու թիկունք է հանդիսանում Կ. Պոլսում Բյուզանդ Քեչյանի խմբագրությամբ նույն 1884 թվից հրատարակվող Արևելքը, մի յերկու տարի հետո ծնելով և իր արբանյակը՝ Փալադաշյանի Ծաղիկը։

Այս տասնամյակում նոր գրական հանդեսներ յերևում են ավելի լուրջ խմբագրությամբ, ունենալով և քաղաքական հասարակական և տնտեսական բաժիններ։ Հիշենք Ս. Հախումյանի Գործը՝ (Շուշի—Թիֆլիս 1882) Տեմիրճիպաշյանի Տեսեսը (Կ. Պոլիս, 1886), Ավ. Արասխանյանի Մուրճը (Թիֆլիս 1889) վորն ամենից ավելի գնահատելին է և վորն ամենից ավելի յերկարատև կյանք է ապրում։

1882-ին Ավ. Արասխանյանը Գերմանիայից վերադառնում է Կովկաս իր ուսանողության շրջանն անցկացրած և «քաղաքատնտեսության դոքտորի» աստիճանով ու կանգ է առնում

Թիֆլիսում, 83-ին կարդում է յերկու հրապարակական դասախոսություն նյութ ընտրելով «Ազգայնական շարժումները» և «Հողի արդյունաբերությունն ու հասարակությունը»։ Մի քանի տարի Ներսիսյան դպրոցում ուսուցչական պաշտոն վարելուց հետո հեռանում է և բաց է անում «արդյունաբերական և առևտրական կուրսեր» 1889-ից սկսում է Մուրճ ամսագիրը, վորի հրատարակությունը առանց ընդհատումների հասնում է մինչև 12-րդ տարվան։ Գր. Արծրունու Մշակը հեգնանքով ու հարձակումներով է վերաբերվում Մուրճին, նրա խմբագրին անվանելով «կլոուն» և «հոգեկան հիվանդ»։

Ի՞նչպիսի հանդես է ներկայանում Մուրճը Արասխանյանի խմբագրությամբ. ամենից առաջ, նախորդ հանդեսների համեմատությամբ նա նկատվում է լուրջ գրական-քաղաքական-հասարակական ամսագիր։

1901-ից սկսվում է Մուրճի նոր շրջանը. Ավ. Արասխանյանի խմբագիր-հրատարակչի իրավունքներն անցնում են նախ Ա. Կրասիլնիկյանի՝ ապա, մի տարուց հետո, Լևոն Սարգսյանի ձեռքը, վորը և շարունակում է մինչև 1917 թիվը։

1880-ին լույս է տեսնում Յերևանի առաջին պարբերականը՝ Պսակ լրագիրը, Վասակ Պապաջանյանի խմբագրությամբ, նույնպես և առաջին Առողջապահական Թերթ՝ դարձյալ Յերևանում (1881) բժ. Լ. Տիգրանյանի հրատարակությամբ։ Այս շրջանին են պատկանում յերկու մանկական հանդեսներ՝ Բուրաստան Մանկանց (Պոլիս, 1882) և Աղբիւր (Թիֆլիս, 1883), յերկու մանկավարժական հանդեսներ՝ Ն. Խուբովյանի Վարժարանը Թիֆլիսում (1882) և Հ. Տեր-Հովհաննիսյանի Մանկավարժանոցը Պետերբուրգում (1884) ու վերջապես Հ. Պարոնյանի յերգիծաբանական Խիկար հանդեսը Պոլսում, (1884).

Բայց այս ամենը արժեք ունենալով հայ գրական ու կուլտուրական պատմության համար, մեր ոբերում հիշելու առանձնապես արժանի են 80-ականներին լույս տեսնող մի քանի այլ տեսակի լրագրներ, վորոնք առաջինն են իրենց տեսակի մեջ և վորոնք ունին հայ քաղաքական կյանքի զարգացման համար բացառիկ նշանակություն. Նրանք գալիս են նոր խոսք ասելու հայ իրականության միալար ու միապաղաղ կյանքում։ Այդպիսի պարբերականներ են հետևյալ չորս թերթերը, առաջինը՝ աշխատավորական՝ Կովկասում, մյուս յերեքը ազգային քաղաքական՝ արտասահմանում. 1880 թվին Թիֆլիսում սկսում է լույս տեսնել Աշխատանք անունով կիսահայերեն կիսառուսերեն մի լրագիր, շուլավերցի նախկին ուսուցիչ Գրիգոր Տեր-Մելքիսեթյանի խմբագրությամբ։

Գյուղացու լեզվով, պարզ ու անպաճույճ խոսքերով ահա ի՛նչ է գրում Տեր-Մելքիսեթյանը մեզանից 55 տարի առաջ—իր «Նվեր քյասիբ գեղըցիներին» գրքույկի մեջ. «Քյասիբ գեղըցի, մինչ յե՞րբ դու պիտի լինես ճնշված անիրավ բուրժուից, մինչ յե՞րբ խաբող սլուկների բերանք պիտի ծծեն քու սուրբ արյունից»։ Հետաքրքրական անձնավորություն է յեղել Գրիգոր վարժապետը։ Ի՞նչ ասել կուզե վոր այդպիսի մի մարդ չէր կարող տանելի լինել «անիրավ բուրժույների» համար. նրան Շուլավերից վռնդում են հոգևոր հայրերն ու քաղաքի իշխանները, վորովհետև բացի այդպիսի «սարսափելի» բաներ գրելուց, նա «աթեիստ» եր՝ անաստված ու անկրոն։

Իր «Հիշողությունների» մեջ Արկոմեդը, նրան անձամբ ճանաչողը, ահա ինչ ունի գրած։

«Յես դեռ սեմինարիստ յեղած ժամանակ առիթ եմ ունեցել ծանոթանալու նրա հետ։ Նա մեռավ սովի, ծայրահեղ չքավորության և հիվանդության ճիրաններում, Թիֆլիսի Միքայելյան հիվանդանոցում։ Նա, ինչպես իր խոսքերից յերևում եր, կարդացել եր Պրուդոնի «Սեփականությունը գողություն է» հայտնի աշխատությունը։ Նա Պրուդոնի աշակերտն եր և սիրահարը. «անմահ Պրուդոն, անմահ Պրուդոն» բացականչում եր հաճախ... Մի անգամ Շուլավերում, ծխակատարության ժամանակ, մի կողմը քշելով տիրացուներին, վորոնք նրա ասելով վատ և հիմար բաներ եյին երգում, կանգնում է նրանց դասում և Նալբանդյանցի «Ազատն Աստված» է յերգում»։

Մյուս յերեք թերթերը, ինչպես ասացինք, ազգային-քաղաքական ուղեգիծ ունեյին— Մկրտ. Փորթուգալյանի հիմնած Արմենիան Մարսելում (1885), վորից սկսվում է առաջին «քաղաքական կուսակցությունը» մեր ժամանակի հայոց մեջ, (արմենականներ). Մ. Սվաղլյանի Հայաստանը Լոնդոնում (1888), վոր ավելի ես չափավոր եր և ուզում եր Յեվրոպայից «վայելուչ և օրինավոր յեղանակով պահանջել 61-րդ հոդվածի իրականացումը», իսկ յերրորդ թերթը՝ վոր ավելի արմատական հանդիսացավ իր քաղաքական գծով, Հնչակյան կուսակցության կենտրոնական որգան Հնչակ շաբաթաթերթն եր ծընեվում. (1887 թ.)։

1890-ականների հենց սկզբում, Թիֆլիսում կազմակերպվում է «Դաշնակցություն» կուսակցությունը, 1891 ին լույս ընծայելով իր պաշտոնաթերթ Դրօշակի առաջին անլեգալ համարը Թիֆլիսում. (թեև թերթի վրա գրելով Ժընև)։ «Դաշնակցությունը—կազմակերպվում է Արծրունու մշակականության, Րաֆֆու, Գամառ-Քաթիպայի գաղափարախոսության և մի հայտնի չափով ռուսական սոցիալիստ-նարոդնիկական հոսանքների զորեղ ազդեցությունների տակ» ասում է Արկոմեդը, բերելով իր «Հիշողությունների» մեջ այդ կուսակցության իդեոլոգների ռոմանտիկ մտածելակերպից վորոշ նմուշներ։ Կ. Պոլսում Համիդյան բռնակալությունն ավելի ևս ուժեղանում է այս շրջանում հայերի վերաբերմամբ Հնչակյանների տեռորի պատճառով և այնտեղի լրագրությունը ահից սարսափած վոչ մի առիթ չի բաց թողնում իր «հավատարիմ հպատակությունն արկանելու առ վոտս» ամենազոր փադիշահի։ Ծնվում է պատրիարքարանի կիսապաշտոնական թերթ համարվող Բիւզանդիոնը (1896) բայց դրա հանդեպ, դադարեցվում են մի քանի թերթեր։ Ռեակցիան թագավորում է իր ամբողջ շուքով և հետևապես պոլսահայ թե կովկասահայ մամուլը լավ որեր չի ապրում։ Նոր հայերեն լրագիր հրատարակելու իրավունքը անկարելի լինելու չափ դժվարանում է Արաքսի այս և թե այն կողմում. Ալ. Հովհաննիսյանի Արձագանքը դադարեցվում է մինիստրների խորհրդի վորոշմամբ (1897)։

Նույնպես մեծ դժվարությամբ են թույլտվություն ստանում հրատարակելու, յերկու մասնագիտական հանդեսներ, այն ևս տարեկան միայն 2 գիրք, Թիֆլիսում՝ Ա. Թարխանյան Թատրոնի (1894) և Ե. Լալայան Ազգագրական Հանդէսի համար (1895)։

Այսպես անփառունակ շրջան է ներկայանում հայ պարբերական մամուլի համար 1890—1905 թվականների տասն և հնգամյա շրջանը բուն հայկական միջավայրում։ 1904-ին ռուս-ճապոնական պատերազմը վերջանում է միապետական Ռուսաստանի պարտությամբ։ Մեր լայնածավալ յերկրի մի ծայրից մինչև մյուսը մտքերն սկսում են «պղտորել», ավելի շուտ պ ա ր զ ե լ։ Դժգոհությունն ու ցասումը գահի և գահը շրջապատող հացկատակների դեմ որ ավուր ավելանում է. այս ու այն շրջաններում տեղի են ունենում բանվորական գործադուլներ։ Ստոլիպինի կառավարությունը, հանդեպ այս ալեկոծության, էլ ավելի դաժան է դառնում, հրամայելով «փամփուշտներ չխնայել» խելագուրկ ըմբոստներին խելքի բերելու համար։ Բաժակը լցվում է ծայրաստիճան. բռնկվում է 1905-ի Հեղափոխությունը և լայն ծավալվելով Ռուսաստանի բոլոր մոտիկ և հեռու վայրերը, վոտքի է հանում աշխատավորական հոծ մասսաներին, տևելով մինչև 1906-ի կեսերը։ Փակված բերանները բացվում են, շղթաները փշրվում, բազմաթիվ քաղաքական աքսորականներ վերադառնում են իրենց տեղերը ն ո ր և ա զ ա տ աշխատանքի անցնելու։ Անլեգալ գործող կուսակցությունները լույս աշխարհ են գալիս և ազատվելով «մամուլի ազատությունից», հիմնում իրենց օրգանները։

Նույն իրադարձությունների և հասարակական մտքի հեղաշրջումների հաջորդական փուլերն ապրում է Անդրկովկասը։ Մեզ մոտ ել քաղաքական կուսակցություններն ավելի կազմակերպված հանդես գալով հիմնում են իրենց թերթերն ու հանդեսները։ Կովկ. Սոց. Դեմ. բանվորական կազմակերպության Թիֆլիսում 1903 թվից անլեգալ հրատարակվող Պրոլետարիատի Կռիւ լրագիրը 1905-ից հրապարակ է գալիս ազատ կերպով։ Ապա և 1905—6-ի ընթացքում նույն կազմակերպության կողմից լույս են տեսնում Սոցիալ Դեմոկրատ և Բանւորի Ձայն թերթերը՝ Բաքվում Կայծ, Նոր Խօսք և Հօսանք թերթերը։ Թիֆլիսում այդ լրագրների խմբագրության գործի գլուխ եյին կանգնած Ստ. Շահումյան, Սուրեն Սպանդարյան, Ս. Կասյան, Ս. Խանոյան, Ա. Խումարյան։ Սոց. Դեմոկրատ Հայ-կազմակերպությունն ել (սպեցիֆիկներ) Բ. Իշխանյանի և բժ. Տ. Խասխանյանի գլխավորությամբ լույս է ընծայում հատուկ թերթեր. Բաքվում Սոցիալիստ և Թիֆլիսում Կեանք ապա նրան փոխարինող Ձայն շաբաթաթերթերը։ Դաշնակցության կովկասահայ մի խումբ իդեոլոգները և ժուռնալիստները հեղափոխությունից առաջ խմբված եյին Մշակ լրագրի շուրջը (Խ. Մալումյան-Ակնունի, Գ. Խաժակ, Ցե. Թոփչյան և այլն). 1905 ին յերբ Թիֆլիսում Կ. Մելիք-Կարագյոզյան հիմնում է Առաւօտ բուրժուական օրաթերթը, այդ անձնավորությունները Մշակից հեռանալով անցնում են Առաւօտի խմբագրություն։ Հեղափոխությունից հետո Դաշնակցության Կովկ. Բյուրոն հիմնում է իր կենտրոնական

որաթերթը Յառաջը, վորը հետագայում անունների բազմաթիվ փոփոխություններ է կրում։ Այս շրջանում լույս են տեսնում և մի շարք «անկուսակցական» պարբերականներ, ինչպես Ա. Աթանասյանի և Ար. Տեր-Գրիգորյանի Անկախ Մամուլը, Հովիվ պահպանողական շաբաթաթերթը, Աղանյան քահանայի Հայրենիքը, Մ. Թառայանի Ընկեր և Ա. Վրույրի Հուսարար շաբաթաթերթերը և այլն։

1908 թվականը իր հետ բերում է քաղաքական մի մեծ նորություն. այս անգամ Թյուրքիայում, և մեծ ազդեցություն ունենում այնտեղի մամուլի հետևապես և հայ մամուլի կյանքի վրա։ Ապրիլ ամսին բռնկվում է «Յերիտասարդ Թուրքերի» հեղափոխությունը, գահընկեց է լինում Համիդ սուլթանը և նրա տեղ գահ է բարձրանում Մահմեդ 5-րդը։

Թյուրքահայերը հարբել եյին այդ ազատությունից. այդ «Նոր կյանքի» արշալույսին—Կ. Պոլսում հիմնվում է Սահմանադիր-Ռամկավար կուսակցությունը և դարձյալ հայ թերթեր և հանդեսներ ծնում են մեծ առատությամբ։

1911-ից մինչև 1914-ի վերջերը, այդ չորս տարվա ընթացքում կովկասահայ քաղաքական հասարակական կյանքն առանձին փոփոխություններ չի կրում։

Այդ ժամանակում նոր յերևացող կարևոր պարբերականներից հիշենք՝

1911-ին, Թիֆլիսում Մեր խոսքը լրագիրը, և Բագվում Կոչ, Նոր խոսք պարբերականները և Յերևանում Նոր Մամուլ թերթը։

1913-ին, Թիֆլիսում Նոր Հոսանք ամսագիրը և Բագվում Բագվի Ձայն որագիրը և Մեր խոսք լրագիրը։

1914-ին Բագվում լույս է տեսնում դաշնակցական մի նոր որաթերթ Արեվ անունով, ապա և Գործ լրագիրը. իսկ սոց.-դեմոկրատները հրատարակում են Շավիղ անունով մի թերթ,

Նույն թվում Յերևանում Արշավիր Միքայելյանը սկսում է խոսք շաբաթաթերթը, իսկ Նոր-Նախիջևանում լույս է տեսնում Գաղութ և Ալեքսանդրապոլում Գավառի Ձայն թերթերը։

1914 թվին վրա է հասնում մեծ պատերազմը. շատ չանցած, Յերիտասարդ Թուրքերի Թյուրքիան ևս հայտարարում է պատերազմ միապետական Ռուսաստանին։ Ահա մի «հոգեպարար և կենսաթրթիռ» ուրախություն է պատում կովկասահայերի մեջ. ինչ խորհրդավոր յերևույթ…

Հասել է ժամանակը վերջապես… ավետում եյին միմիանց տաք գլուխները, ասում, խոսում. լրագրությունը դառնում է «հետաքրքիր…» Նույն իսկ Եջմիածնի Արարատը, կաթողիկոսարանի պաշտոնական օրգանը մասնակցում է այդ «համազգային ուրախությանը»։

«Հայ ժողովրդի հուսալից կյանքի հարության ժամը հասել է… հայ կյանքը կվերածնվի և ամենքս ուրախության արցունքներով ցողված, միմիանց հետ բազմատանջ ժողովրդի կյանքի հարությունը կավետենք»։ («Արար.» 1914 թ. նոյեմբեր)։

«Ազգային բյուրոն» կազմված եր պայծառափայլ փոխարքայի հավանությունն ստացած։ Բյուրոյի չորս անդամները պալատ են հրավիրվում և նախագիծը կազմում հայ կամավորական խմբերի։ Ազգայնական հայ մամուլը գլուխը կորցնում է ուրախությունից. ինչպես չկորցներ, յերբ մանավանդ լսում եր ցարական կառավարության «ազնիվ խոսքը» և Անգլիական կառավարության գլուխ Ասկվիտի «արտասուչ ճառը» հայերի մասին։

Վրա է հասնում 1917-ի փետրվարը։ Ռուսաստանի միահեծան բռնակալությունը տապալվում է և յերկիրը հայտարարվում Հանրապետություն։ Ժամանակավոր կառավարության որով Անդրկովկասի քաղաքական-վարչական գերագույն օրգանը լինում է, Ոզակոմը. (Особ. Кав. Комитет). ապա Զակոմը (Кавк. Ком.) յերկրի տեր ու տնօրենը վրաց Մ ե ն շ և ի կ ն ե ր ն են, թուրքաց՝ Մ ու ս ա ֆ ա թ ը և հայոց Դ ա շ ն ա կ ց ու թ յ ու ն ը։ Կազմված եյին նույնպես «Ազգային Խորհուրդներ», վորոնք թեև մյուս կուսակցությունների հետ կոալիցիոն կազմ ունեյին, բայց գերակշռությունը միշտ մնում եր նույն կուսակցությունների կողմը։

Դաշնակցությունը բացի իր կենտրոնական Հորիզոն թերթից, Թիֆլիսում հիմնում է դարձյալ յերկու նոր լրագիր՝ Ազատամարտ՝ (խմբ. Ն. Աղբալյանի), Աշխատավոր՝ (խմբ. Վ. Խորենի)։ Նույն կուսակցությունը հիմնում է թերթեր նաև գավառներում՝ Ապառաժ (Շուշի), Յառաջ (Բագու), Շարժում (Ախալցխա), Ժայռ և Մարտիկ թերթերը Ալեքսանդրապոլ և այլն։

Պատերազմի հանգամանքներով Թյուրքա-

հայ գաղթականության հետ Անդրկովկասի հայաշատ քաղաքներում հաստատվում են և նրա մտավորական ուժերը, նախկին խմբագիրները, վորոնք և վերսկսում են իրանց թերթերը, Թիֆլիսում՝ Վան Տոսպ շաբաթաթերթը (ռամկավարների), Յերևանում Աշխատանք լրագիրը (դաշնակցականների) և այլն։ Կազմվում են Հայրենակցական միություններ, վորոնց ընդհանուրի օրգանն է ուզում լինել Թիֆլիսում նույն 1917 թվին սկսվող արևմտահայերի անկախ օրգան Հայաստան օրաթերթը, դաշնակցությունից հեռացած Անդրանիկի տնորինությամբ և միջոցներով և Վահան Թոթովենցի խմբագրությամբ։

Ի՞նչ եր ցուցադրում ձախակողմյան հայ մամուլը նույն թվականներին հանդեպ Դաշնակցության։

Թիֆլիսում գործում եր Սոց. դեմոկրատական Պայքար վորի խմբագրությունից ավելի ձախ հոսանքի մի խմբակ դուրս և գալիս և հունիս ամսին հիմնում Բանվորի Կռիվը անունով մեծամասնական լրագիրը, (օրգան Թիֆլիսի Կոմիտեյի)։ Սոց.-հեղափոխականներն սկսում են Նոր Ձայն թերթը. լույս են տեսնում նաև Հող գյուղացիական շաբաթաթերթը Կովկ. գյուղ. Միության կազմակ. կոմիտեյի կողմից և պրոֆմիությունների օրգան Բանվորական Միությունը։

Բաքվում լույս են տեսնում Սոցիալ Դեմոկրատ օրաթերթը Ստ. Շահումյանի խմբագրությամբ, Օրեր լրագիրը Ս. Կասյանի և Մեր Օրեր Բ. Իշխանյանի խմբագրությամբ, (վերջինս շուտով դառնում է Սոց. դեմ. Հայ կազմակերպության, սպեցիֆիկների օրգանը) և Բանվոր լրագիրը (խմբ. Գ. Պիճիկյան)։ Սկսվում է հրատարակությունը Գործ գրական-հասարակական քաղաքական ամսագրի, Բաքվում։

Շուշիում լույս է տեսնում Նեցուկ հասարակական-քաղաքական լրագիրը Ալ. Հովհաննիսյանի՝ և Ալեքսանդրապոլում Նոր Կեանք լրագիրը Գուրգ. Հայկունու խմբագրությամբ։

Հնչակյան կուսակցության կողմից նույն 1917 թվին շարունակում է իր հրատարակությունը նախորդ տարում հիմնված Գաղափար լրագիրը և նոր սկսում «վերակազմյալների» Հայկաշեն ամսագիրը։

Հասնում ենք 1917 թվականի հոկտեմբերը, մի նշանավոր ամիս, վոր գալիս եր համաշխարհային պատմության մեջ թողնելու իր անջնջելի եջերը՝ Կարմիր Հոկտեմբերը։

Հոկտեմբերյան Հեղափոխությունից մինչև Անդրկովկասում Խորհրդ. իշխանության հաստատվելը հայ մտայնության բուրժուական ինտելիգենտական շերտերն ել համախմբվելով հիմնում են Հայ Ժողովրդական Կուսակցությունը, համատիպը ռուս. Կադետական կուսակցության։ Թե Թիֆլիսում և թե Անդրկովկասի այլ քաղաքներում՝ Բաքու, Յերևան, Ալեքսանդրապոլ սկսում են լույս տեսնել այդ կուսակցության օրգանները։

Այս եր ահա հայ լրագրության անցյալի սեղմ ուրվագիծը։ Ժամանակն է վոր մենք ունենանք Հայ պարբերական մամուլի պատմությունը Մարքս-Լենինյան լուսաբանությամբ. մի պատմություն, վորի մեջ մենք կարողանանք տեսնել հայ հասարակական մտքի զարգացման բոլոր փուլերը, հայ հրապարակախոսության անցած ուղիները և մեր քաղաքական կուսակցությունների իսկական կերպարանքը։ Իսկ այդ պատմությունը գրելու համար ամենքից առաջ անհրաժեշտ եր ունենալ մեր լրագրների և հանդեսների լիակատար ցուցակը:

Մեր ներկա աշխատությամբ մենք կամեցել ենք կատարել այդ անհրաժեշտ ծառայությունը։

Գ. Լ.

## I.

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

(ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ)



ԱԶԴԱՐԱՐ

ԹԻՐԱՅ ԱՄՍՈՅ

1794

Բարեպաշտ Պարոնաց և
Մաքրակենցաղ Տիկնաց } Մադրասու Հայոց

[illegible]

Հայերեն անդրանիկ պարբերականի՝ «ԱԶԴԱՐԱՐ» ամսագրի առաջին յերեսը

# ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

(ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1

## 1794

## ԱԶԴԱՐԱՐ

ԹՒՐԱՅ ԱՄՍՈՅ

1794

Ի Հայրապետութեան Տն Ղուկասու Սրբազան Կա–,
Թուղիկոսի Ամենայն Հայոց 'ի Վաղարշապատ.

Եւ 'ի թագաւորութե Օգոստափառ Տեառն Իրակլիոսի Հերակ-
լեան Արքայի 'ի Թիֆլիզ.

Յիշխանութեան Սուրբ Աստուածածնայ Եկեղեցւոյ որ 'ի
ՄԱԴՐԱՍ

Ի Տպարանի Տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրազեցւոյ.

**Մադրաս** — խմբագիր

*1794—1796* — Տէր Յարութիւն Ք. Շմավոնյան

*1—18* — *32 էջ 16 x 19 ս. մետր*

*Տպարան Յ. ք. Շմավոննանի*

Ծանոթություն.—*1794-ի հոկտեմբ. 1796-ի մարտ, 18 տետր. գրաբար. 1846 թվին կրկին Մադրասում լույս է տեսել «Ազդարար» լրագիր Մ. Պ. Հովհաննիսյանի խմբագրությամբ*

2

## 1799

## ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ

*ՈՐ Է*

**Վենետիկ**

*1799—1802*

*Յիշատակարան քաղաքական պատմագրական եկեղեցական և բանասիրական անցից և գիտութեանց աշխարհի*

*Հրատարակութիւն Մխիթարեան Միաբանութեան.*

խմբագիր Ղուկաս վ. Ինճիճեան.

*(Լեզուն աշխարհիկ-ռամկական)*

*Տպարան Ս. Ղազարու*

*884 էջ 6 x 10 ս. մետր.*

3

## 1803


ԵՂԱՆԱԿ
ԲԻՒԶԱՆԴԵԱՆ
ՌԱԶՄԱՎԷՊ
ՏԵԱՌՆ Հ. ՂՈՒԿԱՍՈՒ
ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԻՆՃԻՃԵԱՆ·
'Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ
ՄԽԻԹԱՐԵԱՆ·
1815
'Ի ՎԷՆԵՏԻԿ
'Ի Վանս Սրբոյն Ղազարու.

**Վենետիկ** — *(ՏԱՐԵԳԻՐ)*

*1803—1820* — *Ի Միաբանութենէ Մխիթարեան*

խմբագիր Հ. Ղուկաս վ. Ինճիճեան.

*(Լեզուն աշխարհիկ-ռամկական)*

*Տպարան Ս. Ղազարու*

*288—300 էջ 10 x 15 ս. մետր.*

4

## 1807

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

**Վենետիկ** — *ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ*

*1807—1808* — ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*Հրատարակ. Մխիթարեան Միաբանութեան.*

խմբագիր Հ. Ղուկաս վ. Ինճիճեան.

*Տպարան Ս. Ղազարու*

5 1810

## ՕՁԱՆԱՍՓԻՒՌԵԱՆ

**Բոմբեյ**

*1810 ?—*
*(վիմատիպ).*

—

6 1812

## ԴԻՏԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

*Պատմութիւն քաղաքական ու պատերազմական, ճանապարհական ու եկեղեցական դիպուածներու, որ հիմիկվան ատեններս կըլլան աշխարքիս վրայ.*

**Վենետիկ** *(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

*1812—1816* *(ՆԱԽ ՅԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

*Հրատարակութիւն Արշարունեաց Ընկերութեան.*

խմբագիր Գրիգոր վ. Գապարաճեան
*ապա* Մանուել վ. Ջախջախեան

*(լեզուն աշխարհաբար)*

*Տպարան Ս. Ղազարու.* *նախ 4 էջ, ապա 8 »* } *17 x 24 հ. մետր*

—

7 1815

## ԾԱՆՈՒՑՄԱՆՑ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

*(ՀԱՅԵՐԷՆ-ՌՈՒՍԵՐԷՆ)*

**Աստրախան** խմբագիր—հրատարակիչ

*1815* Կղմէս Շահվերդեան

*Տպարան Վայարհոֆենի.*

Ծանոթություն.—*Հրատարակիչը «վերատեսուչ Հաշտարխանի Հայկազեան կաթոլիկեայ եզուիտական ուսումնարանի» Շահվերդյանը իր շաբաթաթերթն հրատարակում էր ռուսեր.* „Восточ. Известия“ *թերթին կից։ Լույս է տեսել մի քանի համար (հոկտ. 20-ից նոյեմբ. վերջերը). Ունի Լենինգրադի Հանրային գրադարանը։*

—

8 1819

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

**Վիեննա** *(ՏԱՐԵԳԻՐ ?)*

*1819* խմբագրութիւն եւ հրատարակութիւն

*1 համար* *Մխիթարեան Միաբանութեան*

*Մխիթարեան Տպարան*

9 1820

## ՀԱՅԵԼԻ ԿԱԼԿԱԹԵԱՆ

ՈՐ Է ՎԷՏՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՅԼՈՑ

**Կալկաթա** *(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

*1820* *Յիմաստախնդրեան Միաբանութենէ*

խմբագիր Հովհաննէս Տէր-Յակոբեան.

*գրաբար.* *4 էջ, 22 x 32 հ. մետր*

*Տպարան Յորդանեան Պարոն Պօղոսի*

—

10 1821

## ՃՏԵՄԱՐԱՆ

*(ԱՄՍԱԳԻՐ)*

**Կալկաթա** խմբագիր՝

*1821—1823* Մարտիրոս Մկրտչեան Շիրազեցի.

*Տպարան Օձանասփիւռեան ժողովոյն.*

*26 էջ, 12 x 18 հ. մետր.*

—

11 1830

## ՏԻԵԶԵՐՔ

ՀԱՆԴԷՍ ԶԲՕՍԱՎԱՅՐ

?

*1830*

—

12 1832

## ԼՐՈՅ ԳԻՐ

ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

**Կ. Պոլիս** *(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

*1832—1840*

*Ա. համարը որ կրում է իր վրա թիվ 12, (իբր թուրքերենի շարունակություն), կոչվում էր «Թագվիմ Վագայի Լրո-Գիր», Արտօնատէր Ալեքսանդր Բլակ. հրատարակվում էր յերբեմն 7 յերբեմն 14 և 20 օրը մի անգամ.*

(խմբագիր Գէորգ Գրիգորեան)

*16 էջ, ութածալ*

*1840-ից հայատառ-թուրքերեն.*

*Տպարան «Թագվիմ Վագայի» լրագրի.*

*32 թ. լույս է տեսել 22 համար.*
*40 թ. « » 11? »*
*41-ին կոչվում է «Յայտարար Գիր Լրոյ»*
*46-ին «Յայտարար Լրագիր».*

13 1839

# ԾՏԵՄԱՐԱՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԱՑ

*(ԱՄՍԱԳԻՐ)*

**Զմիւռնիա**

*1839—1854*

*(Հրատարակութիւն բողոքական միսիոնարների)*

*(աշխարհաբար)* *16 էջ, 18 x 27. ս. մետր*

*Տպարան Հ. Հալլոքի*
*ապա Դ. Կաիֆֆիթի*
*վերջում Ա. Չըրչիլի.*

— —

14 1840

# ԱԶԴԱՐԱՐ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

ԿԱԶԵԹԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԶԲՕՍԱԿԱՆ

*(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

**Կ. Պոլիս**

*1840—1841*

Կազեթատէր խաչատուր Ոսկանեան.

*Տպարան Պօղոս Արապեանի* *4 էջ*

15

# Արշալոյս Արարատեան

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

**Զմիւռնիա**

*1840—1887*

*Հրատարակիչ և տէր լրագրույ*
Ղուկաս Գ. Պալդազարեան.

*Վերի մահից հետո* խմբագիր՝ Յարութիւն Սըվաճեան.
*(Նախ կիսամսյա, ապա տասնօրյա, վերջը շաբաթօրյա).*

*Տպարան նախ՝ Ստեփան Պապոյանի*
*ապա «Արշալոյս Արարատեանի»*

— —

16 1841

# ՅԱՅՏԱՐԱՐ ԳԻՐ ԼՐՈՅ

ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

*(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

**Կ. Պոլիս**

*1841—1849*

*Արտօնատէր Ալեքսանդր Գլակ*
(խմբագիր Գէորգ Գրիգորեան).

*Շարունակություն «Լրոյ Գիր» թերթի (տես թիվ 12)*
*Իսկապես 40 թ. դեկտ. 3-ից*
*1846-ի օգոս. 26-ից «Յայտարար Լրագիր»*

— —

17 1843




**Վենետիկ** *ՀԱՆԴԻՍԱՐԱՆ*

*1843—1934*

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

*Հրատարակութիւն Մխիթարեան Միաբանութեան*
(խմբագիրները միաբաններից)
(Հիմնադիրը յեվ առաջին խմբագիրը
Գաբր. վ. Այվազովսկի).

*1843—58 յերկշաբաթաթերթ*
*1857—73 ամսագիր*
*1773—95 Նոր շրջան, յեռամսյա*
*1896—մինչև այժմ ամսագիր.*

*Տպարան Ս. Ղազարու.* *48 էջ, 17 x 26 ս. մետր.*

18

# ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

**Զմիւռնիա** *ՇԱԲԱԹԱԹԵՐԹ*

*1843—1846* *(ապա կիսամսյա)*

*Հրատարակութիւն Զմիւռնիայի Արագածունեաց Ընկերութեան*

խմբագիր Տնօրէն Խ. Ց. Մելիքսեդումեանց.

*Տպարան Արագածունեաց ընկ.* *4 էջ, 30 x 42 ս. մետր*
*(Հրատարակվել է 108 համար).*

— —

19 **1845**




ՈՒՍՈՒՄՆ ԱՌՆԷ ԶՄԱՐԴ ԵՐՋԱՆԻԿ

ՕՐԱԳԻՐ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ
ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ
(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)

**Կալկաթա**
*1845—1948* Վերատեսուչ՝ Մեսրոպ Թաղիադեանց.
*(գրաբար)* *8 էջ, 20 x 26 ս. մետր.*
*Տպարան Արարատեան ընկ.*
*(տես «Ազգասէր Արարատեան»)*

20

## ԸՆՏԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԷՐ

ՕՐԱԳԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ
(ԱՄՍԱԳԻՐ)

**Կ. Պոլիս**
*1845—1855* *Տնօրէն՝ Ազգասիրական ընկ.*
Խմբագիր՝ Վ. Սոփեալեան.
*Տպար. «Ազգասէր ընկ.»* *16 էջ, մեծ ութածալ*

21 **1846**




**Թիֆլիս** *(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*
*1846—1847*
*(գրաբար)* Խմբագիրներ՝ Հակոբ Կարենեան, Միքայէլ Պատկանեան, *ապա* եւ Հակոբ Արզանեան
*Տպ. Ներսիսեան դպրոցի* *4 էջ, 31 x 43 ս. մետր*

22

## ՀԱՅԱՍՏԱՆ

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**Կ. Պոլիս**
*1846—1852* *Հրատարակիչք լրագրիս* Յով. Պր. Տէր Կրպ. Զամուռճեանց
*1848 սեպտ. 1849-ի հունիս, Ազգ. Պատ-* Մկրտիչ Աղաթոն *րիարքարանի միջոցներով. 1849-ից* Մկ. Աղաթոն *մենակ.*
*1850—52 նոր շրջան. Հրատ.* Յով. Զամուռճեանց.
*Տպ. Յով. Միւհէնտիսեանի Թերթ. 4 էջ, 35 x 48 ս. մետր*

23 **1847**




**Վիեննա** *Հրատարակութիւն*
*1847—1863* *Մխիթարեան Միաբանութեան*
*Մխիթարյան տպ.* *Թերթ 4 էջ, 28 x 45 ս. մետր*
*(Վերջին տարիներում «քաղաքական և ուսումնասիրական կիսամսեայ» լրագիր)։*

24

## ՍԻՆԳԱՓՈՐ

**Սինգափուր** *(Ունեցել է կարճատև կյանք և հավանորեն տպագրվել է վիմատիպ)*
*1847*

25 **1848**




**Կալկաթա** Վերատեսուչ Մ. Դ. Թաղիադեանց.
*1848—1851* *8 էջ, 21 x 28 ս. մետր*
*Տպարան «Ազգասէր Արարատեան»*
*1849-ի սեպտեմբերից «Հանրապատում կիսամսագիր» (Շարունակութիւն «Ազգասէր»-ի, 1848-ի հուլիսից)*

26

## ԲԱՆԱՍԷՐ

*ՏԱՄՆՕՐԵԱՅ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

**Մադրաս** — խմբագիր Ս. Գ. Ցովհաննէս

*1848—1849*

*Վիմատիպ Աճխատիկ* — *2 էջ.*

27

## ԲԱՆԲԵՐ ՊԱՐՏԻԶԱԿԵԱՆ

**Պարտիզակ**

*1848*

— —

28 1849

## [illegible]

ԼՐԱԳԻՐ.



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

**Սմիւռնիա** — խմբագիր Գրիգոր Գալստեան

*1849—1853* — *4 էջ, 29 x 39 հ. մետր*

*«Արփի» վիմագարան*

29

ԼՐԱԳԻՐ

## ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ.

**Կ. Պոլիս** — *(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

*1849—1850*

(«ԹԱԳՎԻՄ ՎԱԳԱՅԻ» ԹՈՒՐՔԵՐԷՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ)

*Շարունակութիւն «Լրոյ Գիր» և «Ցայտարար Գիր Լրոյ» թերթերի*

*Այս լրագրի մի քանի համարը մեջ ընդ մեջ կոչվել է «Սուրհանդակ Կոստանդեան».*

*Տպարան Պօղոսի Արապեան*

*Ապուչիխնյեւոյ* — *4 էջ, 28 x 44 հ. մետր.*

— —

30 1850

## ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**Թիֆլիս** — *(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

*1850—1851* — խմբագիր—հրատարակիչ Գաբրիէլ Ք. Պատկանեան

*Տպ. Գ. Ք. Պատկանեանի* — *16 էջ, 15 x 22 հ. մետր*

31

## ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**Նիկոմիդիա** — *ՇԱԲԱԹԱԹԵՐԹ*

*1850—53* — Հրատարակիչ լրագրիս Աբրահամ Մուրադեան

*Լույս է տեսել 77 համար*

*Տպար. «Հայրենասէր»-ի* — *2—4 էջ, 22 x 30 հ. մետր*

— —

32 1851

## ԲԱՆԱՍԷՐ

*ԱՄՍԱԿԱՆ ՏԵՏՐ*

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

**Կ. Պոլիս** — Աշխատասիրող Ցով. Հիսարեան

*1851—1852* — *48 էջ, 15 x 22 հ. մետր*

*Տպարան Գայոլի*

33

## ԲՈՒՐԱՍՏԱՆ

*ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿԵԱՆ*

ՕՐԱԳԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

**Կ. Պոլիս** — *(ԱՄՍԱԳԻՐ)*

*1851—1852* — (խմբագրությամբ Ս. Սահակյան դպրոցի աշակերտական մարմնի)

*(Լույս է տեսել 1851-ին 12, և 1852-ին 8 համար)*

*Տպ. Ցով. Մինասեանի* — *16 էջ, 18 x 27 հ. մետր.*

34

## 1852

# ՄԱՍԻՍ

*ԼՐԱԳԻՐ*

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Կ. Պոլիս — ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*1852—1908* — Խմբագիր-տնօրէն Կ. Ս. Իւթիւճեան

*Կ. Իւթիւճյան մեռնելով արտոնատերը, խմբագիրներ լինում են՝ Գրիգոր Զոհրապ, Տիգրան Արփիարյան, Միքայել Շամտանճյան, Բյուզանդ Քեչյան, Հրանտ Ասատուր, նորից Տիգրան Արփիարյան, Յենոք Արմեն։*

*Նախ շաբաթաթերթ ապա լրագիր հանապազօրեայ, կրկին շաբաթաթերթ վերջում կիսամսեայ հանդէս։*

*1888—92-ը գրական հանդէս. 1892—95 գրականական-վարժական. 96—1908 դարձյալ գրական։*

*սկզբում 4 էջ, 34 x 50 հ. մետր*
*ապա 23 » 17 x 25 »*
*ապա 32 » 21 x 29 »*

*Տպարան Յ. Միւհէնտիսեանի*
*ապա «Արեւելք» լրագրի*
*ապա Ծիփնէճեանի*

*Կառավարության կողմից դադարման և յետաձգված չորս անգամ. 1881-ին, 1883-ին (երկու անգամ) և 1888-ին։*

35

# ՆՈՅԵԱՆ ԱՂԱՒՆԻ

*ՇԱԲԱԹԱԹԵՐԹ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Կ. Պոլիս — Տեարք լրագրոյս

*1852—53* — Գրիգորիս Մարկոսեան<br>Սահակ Ապրոյեանց

*Տպարան Յ. Միւհէնտիսեանի*
*ապա Սեփական — 4 էջ, 34 x 48 հ. մետր*
*ապա Պ. Արապյանի*

*Լույս է տեսել 74 համար. № № 54—74-ի վրա խմբագրի անուն նշանակված չկա, հավանորեն Նիկ. Զորայան։*

36

## 1853

# ԱՐՓԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՕՐԱԳԻՐ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Զմիւռնիա — *(ԱՄՍԱԹԵՐԹ)*

*1853—1856 (—63 ?)* — Խմբագրութեամբ Տետեյեան եղբարց

*Տպարան Տետեյեան եղբ.* — *66 էջ 19 x 27. հ. մետր*

37

## 1854

# ԹՈՒԹԱԿ ՀԱՅԿԱԶԵԱՆ

ՕՐԱԳԻՐ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Զմիւռնիա — *(ԱՄՍԱԹԵՐԹ)*

*1854—1855* — Աշխատասիրութեամբ երից աշակերտաց Մեսրովպեան վարժարանին Զմիւռնիոյ

*Տպ. «Թութակ Հայկազեան»* — *16 էջ, 14 x 29 հ. մետր*

38

## 1855

# ԱՍՏՂԻԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ

*ԱՄՍԱԹԵՐԹ*

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Կ. Պոլիս — ԵՒ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ

*1855—1856* — Աշխատութեամբ Մեսրովպեան ընկերութեան

*(Լույս է տեսել 12 համար)*

*Տպ. Յ. Միւհէնտիսեանի* — *16 էջ, 18 x 27 հ. մետր*

39

# ԱՒԵՏԱԲԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԵԱԿԱՆ

ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

*(Բողոքական քարոզիչների օրգան)*

Կ. Պոլիս — Խմբագիր Ծ. Կրին<br>Փոխ-խմբագիր Հ. Պարնըմ<br>*ապա* Խմբագիր Մեքալըմ

*1855—1915*

*8 էջ, 29 x 40 հ. մետր*
*նախ թերթիկ 4 էջ, 24 x 33 »*

*1914 թվից «շաբաթական հանդէս ընտանեկան կրօնական, գիտական և քաղաքական» 19 x 26 2 էջ*

*(Շարունակութ. «Ճշմարտութեան Պիտանի Գիտելեաց»-ի)*

*Տպագր. Յ. Պոյաճեան*
*ապա Քեշիշեանի*

40

# ԱՐԵՒԵԼՔ

*ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ*

Պարիս — Խմբագիր—տնօրէն Ստեփան Ոսկան

*1855—1856*

*32 էջ, 16 x 23 հ. մետր*

*Շարունակվել է «Արևմուտք» անունով*

*Տպարան Վալտերի*
*ապա Ծ. Արամեանի*

41


ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՌՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ ՅԱՐԾՐՈՒՆՔ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

1862 — 1863

ՇՐՋԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹԻՒ 5

ԻՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՈՅՆ Ի ՎԱՐԱԳ

**Կ. Պոլիս**

*1855/56*

*էջ 32, 14 x 11 ս. մետր*

**Վարագ (Վան)**

*1858—1864*

*1863—64-ին* խմբագրութեամբ աշակերտաց

*1873—74 թ.* խմբագիր Ս. Մանուէլ Անանեան

**Կ. Պոլիս**

*1873—1874*

*չորաթաթերթ 4 էջ, 24 x 34 ս. մետր*

*Կ. Պոլսի առաջի շրջանում* «Թռուցեալ Հայրենասէր թեւօք յԱրծրունի Գահէն ի Վանտոսպ»

*Վանում, սեփական տպարան*
*Կ. Պոլսում, Արապեանց*

42

# ԶՈՒԱՐՃԱԽՕՍ

*ՕՐԱԳԻՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ*

ԾԱՂՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**Կ. Պոլիս**

*1855—1856*

*Հրատարակութիւն Զուարճասիրաց Ընկերութեան*

*Տպարան Արապեանց*

43



# ՄԱՍԵԱՑ ԱՂԱՒՆԻ
ԵՒ
# ԱՒԵՏԱԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

*ԱՄՍԱԳԻՐ*

**Փարիզ**

*1855—1858*

*Հրատարակեալ ազգասէր սատարութեամբ Պարոն Եդուարդայ Ռափայէլի Ղարամեան*

*(Հայերէն—ֆրանսերէն)*

Խմբագրութեամբ Գաբրիէլ վ. Այվազեանց
(*Խմբագրութեան մէջ նաև*
Ամբրոսիոս վ. Գալֆայեան
Խորէն վ. Գալֆայեան Նարբեյ)

**Թեոդոսիա**

*1859—1865*

*Թեոդոսիայում* վերադիտող ամսագրիս Գ. Վ. Այվազեան

*(Հայերէն–ռուսերէն)*

*24 էջ, 24 x ս. մետր*

*Տպարան՝ Փարիզում Ճ. Արամեանի*
*Թէոդոսիայում Խալիպեան Ուսումնարանի*

Ծանոթ.—*1857—58-ին «Մասեաց Աղաւնի և Ծիածան Հայաստանեայց» «Հնդետասանօրեայ հանդէս ազգային կենցաղօգուտ և քաղաքական գիտելեաց»։*

44

1856

# Մ Ե Ղ Ո Ւ

*ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ*

ՀԱՒԱՔԱԾՈՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻ ԳԻՏԵԼԵԱՑ

**Կ. Պոլիս**

*1856—1874*

Խմբագիր Տնօրէն Յարութիւն Գ. Սվաճեան
*1863-ից* Յովհաննէս Հովուեան եւ Աբրահամ Մուրադեան
*1872-ից* Յակոբ Պարոնեան

*Տպարան եղբ. Արապեան*
*ապա Ռ. Քիւրքճեան*
*ապա Ասլանեան*

*24 էջ, 16 x 24 ս. մետր*
*ապա 8 էջ, 22 x 30 ս. մետր*

*1859-ից տասնօրեա, 4 էջ*
*1870-ից եռօրեա հանդէս.*

45 **1857**



*ՏՕՏՐԱԿ ԿԻՍԱՄՍԵԱՅ*

ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**Կ. Պոլիս** — *1857—1866 (??)*

խմբագիր եւ տէր
Յովհաննէս Տէրոյենց (Զամուռեան)

*32 էջ, 15 x 21 հ. մետր*

*1864—66 (??) նոր շրջան, հանդէս ութօրեայ մեծ քառածալ դիրքով*

*Տպարան Յ. Տէրոյենց*

46

# ՄՈՒՍԱՅՔ ՄԱՍԵԱՑ

*ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԹԱՏԵՐԱԿԱՆ*

**Կ. Պոլիս** — *1857—1858*

Հեղինակ գործոյս
Ա(րամ) Հ. Ճիզմեճեան
(Արմենակ Հայկունի)

*1863—66 Նոր շրջան. «Ձայն ընկերասիրական» յենթավերնագրով, տասնօրեայ*
*1866-ին երկշաբաթաթերթ* *16 էջ, 29 x 45*

*Տպարան Արևելեան.*

47

# ՔՆԱՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ

*ԱՄՍԱԹԵՐԹ*

**Կ. Պոլիս** — *1857—1859—63*

խմբագիրներ Ա. Յովհաննեսեան եւ
Գ. Երանեան
*վերջում* Ն. Թաշճեան

*Գ. Երանեանի Տպ.*
*(Վիմատիպ)*

48 **1858**

# ԵՒՐՈՊԱ

ՈՐԱԳԻՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ

*(ԿԻՍԱՄՍԵԱՅ)*

**Վիեննա** — *1858—1863*

*(Հրատարակութ. և խմբագրութ.*
*Մխիթարեան Միաբանութ.)*

*Մխիթարեան Տպարան* *16 էջ, 20 x 28 հ. մետր*

49

# ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

**Զմիւռնիա** — *1858* *1—16*

խմբագիր
Գալուստ Կոստանդեան

50



ՕՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

*(ԱՄՍԱԳԻՐ)*

**Մոսկվա** — *1858—1864*

խմբագիր—Հրատարակիչ
Ստեփաննոս Նազարեանց

*64 էջ, 16 x 24 հ. մետր*

*Տպարան Լազարեան Ճեմարանի*

51



ԱՄՍԱԳԻՐ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հրատարակեալ Մսեր Մագիստրոսէ Մսերեանց
Եւ ի Զարմայրայ Մսերեանց

**Մոսկվա** — *1858—1862*

*32 էջ, 16 x 23 հ. մետր*

*Տպարան Լազարեան Ճեմարանի*

52

## ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

**Թիֆլիս** — խմբագրիչ՝

*1858—1886* — Ստեփաննոս Ք. Մանդինեանց

*Շաբաթաթերթ, 8 եջ, 22 x 31 հ. մետր*

*1863-ից Նոր շրջան, լրագիր քաղաքական և բանասիրական*

խմբագիր Պետրոս Սիմոնեանց

Հրատարակիչ Համբ. Էնֆիաճեանց

*1880-ից 4 եջ, 4 x 61 հ. մ. երկօրեա, եռօրեա և նորից շաբաթաթերթ.*

*(1911 թ. հունվ. 30-ին լույս տեսավ «Մեղու Հայաստանի» 1 համար Գ. Սիմոնեանի մահվան առթիվ)։*

*Տպարան Ներսիսեան դպրոցի*
*ապա Էնֆիաճեանց և ընկ.*
*ապա Ռոտինեանի*

53

## ՏՈՄԱՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ

**Վիեննա** — *(ՏԱՐԵԳԻՐ)*

*1858—1862* — Հրատարակութ. եւ խմբագրութ.

*Մխիթարեան տպարան* — Մխիթարեան Միաբանութեան

---

54

## 1859

## ԱՐԵՒՄՈՒՏՔ

ԱՐՁԱԳԱՆԳ ԵՒՐՈՊԱՅԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

**Պարիս** — *(ԿԻՍԱՄՍԵԱՅ)*

*1859—1865* — խմբագիր Տեօրէն Հ. Ս. Ոսկանեան

*1859-ին 24 համար* — (Ստեփան Ոսկան)

*1864 8 »* — *8 եջ, 24 x 32 հ. մետր*

*1865 3 «*

*Տպարան Արամեան*

---

55

## 1860

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԴԱՐ

*(ԿԻՍԱՄՍԵԱՅ)*

**Կ. Պոլիս** — ՕՐԱԳԻՐ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ

*1860—1863* — Հրատարակիչ՝ Ունեմն բանասէր

խմբագիր-տնօրէն Մ. Գ. Տեյիրմենճեան

*Տպ. Ռ. Քիւրքճեանի* — *8 եջ, 21 x 29 հ. մետր*

*1861-ին Տասնօրեայ օրագիր*

56

## ԹՈՒԹԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ՏԵՏՐ ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻ ԳԻՏԵԼԵԱՑ

**Կ. Պոլիս** — *(ԿԻՍԱՄՍԵԱՅ)*

*1860—1863 (?)* — խմբագիր Ա. Հիւսեինեան

*Գեստական Տպարան*

57

## ԿՌՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

*ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ*

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ

*ՆՈՒԻՐԵԱԼ*

*ՆԱԽՆԻ ԵՒ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ*

**Թիֆլիս** — Հրատարակիչ եւ տնօրէն

*1860—63* — Համբարձում Էնֆիաճեանց

խմբագիր Մարկոս Աղաբէկեան

*Տպարան Մելքումեանց և Էնֆիաճեանց* — *40 եջ, 16 x 25 հ. մետր*

58

## ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԷՍ ՀԱՍՏԵՆԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

*(ԿԻՍԱՄՍԵԱՅ)*

**Զմիւռնիա** — խմբագիր Ա. Վանանդեցի

*1860/61—61/62*

*Տպ. «Արշալոյսի Արարատեան»*

*(հրատարակվել է 23 համար)*

*1861 թ. հունվարից—ոգոստոս դադարված.*

59

## ՍԷՐ

ՈՒՍՈՒՄՆ ՀՆԳԵՏԱՍԱՆՕՐԵԱՅ

**Կ. Պոլիս** — խմբագիր—Տէր Ա. Ճեվահիրճեան

*1860—1864* — *64-ին* Պօղոս Պարնասեան

*1863-ին Մտերիմ ժողովրդեան յեղթավերնագրով,*

*(61-ին ութնօրեայ, 63-ին յեռօրեայ. 64-ին տասնօրեա).*

*Տպարան Արեելեան ապա Սեփական* — *8 եջ, 21 x 28*

60

# ՓԱՐԻԶ

*ԼՐԱԳԻՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ*

*(ապա կիսամսեայ)*

**Պարիս**

*1860—1863* Խմբագիր Աբրահամ Մուրադեանց

*Տպարան Արամեան* *2 3 էջ, 3 x 50 հ. մետր*

*ապա Շահնազարեան*

61

# ՓՈՒՆՋ

*ՇԱԲԱԹԱԹԵՐԹ*

*(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ)*

**Կ. Պոլիս** Տնօրէն եւ Տէր Հ. Ս. Ալաճաճեան

*1860—1907* *ապա* Սիմոնիկ Ալաճաճեան

*վերջում* Ս. Չեռմիկճեան

*թերթ, 4 էջ, 36 x 52 հ. մ.*

*ապա 4 » 28 x 41 հ. մ.*

*Տպ. Կարապետ Պիպերեանի*

*ապա Մ. Սաքքեան և ընկ.*

Մանր. — *Նախ քաղաքական ազգային և առողջական.*

— —

62 **1861**

# ԱՐԵՒԱԿ

**Կ. Պոլիս** Խմբագիր Տնօրէն

*1861* Տիգրան Մանուկեան

*(Վիմատիպ)*

63

# ԹՌՉՆԻԿ

*ՕՐԱԳԻՐ ԱՄՍՕՐԵԱՅ*

**Կ. Պոլիս** Խմբագիր Տնօրէն

*1861—1862* Գրիգոր Պալեան

*(ապա Վրթանես Խահանայ)*

*8 էջ 22 x 30 հ. մ.*

*Տպարան Ռ. Քիւրքճեանի*

— —

64

# ԾԱՂԻԿ

*ՀԱՆԴԷՍ ՏԱՍՆՕՐԵԱՅ*

*ՇՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ*

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՎԻՊԱԿԱՆ

**Զմիւռնիա**

*1861—1865* Ծարագիր Գ. Չիլինկիրեան

Ս. Հայկունի

**Կ. Պոլիս** *1865 ապր. 1-էն—67 թ. ապր. 12.*

*1864 թ. նոյեմբերէն կիսամսեա.*

Խմբագիր Զարեհ Ստեփանեան

**Զմիւռնիա** *1867 սկզբից մինչև նոյեմբ. 1-ը.*

Խմբագիր Մ. Մամուրեան

*Ծաղիկը լույս է տեսել ընդամէնը 146 համար.*

*Տպարան Տեռեյեան եղբ.* *8 էջ, 22 x 29.*

65

# ԾԱՂԿՈՑԱՁՈՐ

ՕՐԱԳԻՐ

*(ՅԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

**Փարիս** Խմբագիր. Տնօրէն

*1861* Խաչատուր Միսաքեան

*Տպարան Արամեան*

66

# ԿԻԼԻԿԻԱ

ՕՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

*(ԿԻՍԱՄՍԵԱՅ)*

**Կ. Պոլիս** Խմբագիր. Մանուէլ Բարունակ Իւթիւճեան

*1861—1875* *32 էջ, 15 x 26 հ. մետր*

*(1909)* *24 » 22 x 28 հ. մետր*

*1864-ից շաբաթաթերթ, 4 էջ, 28 x 49 հ. մ.*

*«Հանդէս բժշկական ուսումնական և ազգային»*

*1867-ից Նոր շրջան. Հանդէս միամսեայ առողջական և ուսումնական, 48 էջ*

*1909-ին 3 համար, իսկ մինչև 1919-ը՝ միջանկեալ «Փունջ» անունով*

Տնօրէն Հ. Ս. Ալաճաճեան

*Տպարան Յ. Մուհենտիսեան*

*ապա Թ. Տիվիթճեան*

67



ԼՐԱԳԻՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԿԻՍԱՄՍԵԱՅ

**Մոսկվա** — խմբագիրք՝ Մ. և Զ. Մսերեանց

*1861—1864* — խմբագրիչ՝ Զ. Մսերեանց

*Թերթ, 4 էջ, 27 x 34 հ. մետր*

*Լոյս է տեսել 68 համար*

*Տպարան Լազարեան Ճեմարանի*

68

# ՎԱՐԴ ՄԵՍՐՈՊԵԱՆ

*ՀԱՆԴԷՍ*

**Կ. Պոլիս** — խմբագիր տնօրէնք՝

*1861—1863* — Թովմաս Մ. Պոռեանց և Սարգիս Բարսեղեան

*նախ ամսաթերթ* — *61-ին 1—12*

*ապա կիսամեայ* — *62-ին 1— 5*

*63-ին 1— 8*

*Տպարան Ռ. Քիւրքճեան* — *8 էջ, 20 x 28*

69

# ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

*(ՀԱՆԴԷՍ ՑԵՐԱԺՇՏԱԿԱՆ)*

**Կ. Պոլիս** — *ԿԻՍԱՄՍԵԱՅ*

*1861—62—64* — խմբագիրներ՝

*(1—12)* — Գ. Երանեան և Տ. Չուխաճեան

*1864-ին փեցամսյա (2 համար)* Ն. Թաշճեան

*Տպարան Երանեանի*

— —

70 1862

# ԱՓԵՂՑՓԵՂ

**Զմիւռնիա** — *ԶԱՒԵՇՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ*

*1862* — խմբագիր—հրատ. Տետեյեան

*Տպարան Տետէյեան եղբարց*

71

# ԲՈՂԲՈՋ

**Զմիւռնիա** — *ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ*

*1862* — Հրատարակութիւն և խմբ. Մեսրոպեան սանուց.

*Տպարան ?*

72

# ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ

**Զմիւռնիա** — *(ԿԻՍԱՄՍԵԱՅ)*

*1862 1863* — Տարադիրք Գր. Պարտիզպանեան

*Շրջան վեցամսեայ* — Տ. Գարագաշեան

*(լոյս է տեսել 18 համար)*

*Բ. շրջանում [հանդէս ազգային և բանասիրական*

*Տարադիր—տնօրէն* Գր. Պարտիզպանեան

*Տպարան Տետէյեան եղբ.* — *8 էջ, 21 x 28*

73

# ԴԻՄԱԿ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԷՍ ԶՄԻՒՌՆԻՈՅ
*ԸՆԴ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՄԲ ՄԻՄՈՍԻ*

**Զմիւռնիա** — *(ԿԻՍԱՄՍԵԱ)*

*1862—1863* — խմբագիր Կարապետ Տետեյեան

*1— 7*

*8—26* — *8 էջ, 25 x 33 հ. մետր*

*Տպարան Տետէյեան եղբ.*

74

# ԵՂԲԱՅՐԱՍԷՐ

*ՏԱՍՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ

**Կալկաթա** — Վերատեսուչ

*1862—1863* — Եղիազար Տէր Յարութիւնեան

*(գրաբար)* — *1862-ին 1—29*

*Վիմատիպ* — *63-ին 30—37* — *8 էջ, 24 x 33 հ. մետր*

75

# ԶԵՓԻՒՌ ՀԱՅՐԵՆԵԱՑ

*ՀԱՆԴԷՍ ՀՆԳԵՏԱՍՆՕՐԵԱՑ*

**Կ. Պոլիս** — խմբագիր Տնօրէն

*1862—1867* — Մինաս Հ. Գափամաճեան

*ապա* Մարտիրոս Թետիճեան

*ապա ութօրեայ, վերջում տասնօրեայ.*

*Տպարան Յ. Միւհէնտիսեան*

*ապա Ռ. Քիւրքճեան* — *8 էջ 20 x 29 հ.մ.*

76

## ԿԻԹԱՌ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀՐԱՒԷՐ ՀԱՅԿԱԶՆ ՕՐԻՈՐԴԱՑ

**Կ. Պոլիս**

*1862—1863*

*(1—7)*

խմբագրուհի Ե. Կ. Տ. Հայկուհի

*(Էլպիս Քարաքաշեան Տողրամաճեան)*

77

## ՄԱՄՈՒԼ

**Կ. Պոլիս**

*1862*

78

## ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

*ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ*

**Կ. Պոլիս**

*1862—1866 (4?)*

խմբագիր Տնօրէն Կարապետ Իւթիւճեան

*Տպարան Յով. Միւհէնտիսեան*
*տպ. «Մասիս» լրագրի*

79

## ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՑ

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ՆՈՐԵԼՈՒԿԻ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԵԱՑ

**Զմիւռնիա**

*1862*

*1—12*

խմբագիր Տնօրէն Սարգիս Փափազեան (Տէր-Կարապետեան)

*8 էջ 21 x 29 հ. մ.*

*Գիւտեկեան Տպարան*

Ծանօթ.—*Դաշարման պատճառն յեղել է «Հայ լնաա-ն,-քնեբու բողոքը»*

80

1863

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԴԿԱՑ ԼՐԱԳԻՐ

**Կալկաթա**

*1863—1865*

81

ԼՐԱՏԱՐ

## ԱՐԾՒԻԿ ՏԱՐՕՆՈՅ

ԹՌՈՒՑԵԱԼ ԹԵՒՈՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՒՈՅՆ

*Ի ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ ՑԻՆՆԱԿՆԵԱՆ ԼԵՐԱՆՑ*
*Ի ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՀՐԱՇԱԼԻ ՈՒԽՏԷՆ*

**Մուշ (Տարօն)**

*1863—1865*

խմբագիր Գարեգին Սրուանձտեան

*Տպարան «Վասպ. Արծուոյն»*

82

## ԷՐԿՐԱԳՈՒՆՏ

*ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏՐԻ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ
ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

*(թերթ, ամիսը 1—2 անգամ)*

**Մանչեստր**

*1863—1864*

*1—59*

Տէր եւ խմբագիր Կ. վ. Շահնազարեանց

*8 էջ, 27 x 40 հ. մետր*

*Սեփական Տպարան*

83

## ԶԵՓԻՒՌ ԹԱՏԵՐԱԿԱՆ

*(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

**Կ. Պոլիս**

*1863*

խմբագիր Տնօրէն Մինաս Գափամաճեան

*(Հրատարակւում էր փոխանակ համերլմա «Զեփիւռ Հայրենեաց»-ի)*

*Տպ. Միւհէնտիսեան*

84

## ԹՌՉՆԻԿ ՊԵԳԱՍԵԱՆ

*ԼՐԱԳԻՐ ՀՆԳԵՏԱՍԱՆՕՐԵԱՑ*

**Կ. Պոլիս**

*1863—1865*

խմբագիր Տնօրէն Գրիգոր Ալէաքճեան

*Կարճ ժամանակից դառնում է «Պեգասեան Թռչնիկ» տասնօրեայ.*

*Տպարան ?*

85

## ԺԱՄԱՆԱԿ

ՀԱՆԴԷՍ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ

*(ԿԻՍԱՄՍԵԱՅ)*

**Կ. Պոլիս**

*1863—1868*

Տնօրէն խմբագիր Ստեփան Պ. Պօղոս Փափազեանց

*Տպարան Միւհէնտիսեանի*

*8 էջ, 22 x 30 հ. մետր*

86

# ՀԻՒՍԻՍ

*ԲԱԶՄԱՎԷՊ ԼՐԱԳԻՐ*
*(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

**Պետերբուրգ**

*1863—1864*

Հրատարակիչ Ռափայէլ Պատկանեան

*Սեփական Տպարան* *թերթ, 8 էջ, 23 x 34 հ. մետր*

87

## ՎԱՐԴ
ԿԵՍԱՐԻԱՅ

(ԿԻՒԼԶԱՐԸ ԳԱՅՍԱՐԻՅԷ)
ՕՐԱԳԻՐ ԵՐԿԵՐԱԲԱԹԵԱՑ

**Կ. Պոլիս**

*1863*

խմբագիր Տեօրէն տ. Մարտիրոս քահ. Նիկողոսեան

*(Լոյս է ընծայ 8 համար հայերէն և հայատառ թուրքերէն)*

*Տպարան Ռ. Քիւրքճեան* *8 էջ. 20 x 28 հ. մետր*

88

## ՏԱՃԱՐ ՄՈՒՍԱՅԻՑ

?

*1863*

89

## ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

**Կ. Պոլիս** *ԱՄՍԱԳԻՐ*

*1863*

խմբագիր Տեօրէն Տ. Չուխաճեան
Վ. Փափազեան

90

1864

## ԼՈՒՍԱՓԱՅԼ

*ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ*

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ

**Զմիւռնիա**

*1864*

խմբագիր Տեօրէն Գ. Ագճայեան

*1 համար.*

91

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

*ԴՊՐԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ*
*ԱՄՍԱԳԻՐ*

**Թիֆլիս**

*1864—1871*

խմբագիր հրատարակող
վարդապետ Խորէն Ստեփանէ

**Շուշի**

*1874*

**Գանձակ**

*1874—75*

**Թիֆլիս**

*1876*

**Բագու**

*1877—79*

*48 էջ, 15 x 21 հ. մետր*

Ծանոթ. *Մարկոս Աղաբեկյանի «Կռունկ Հայոց Աշխարհին»-ի շարունակութիւն. Ստեփանեն իր հանդեսի առաջին համարը կոչեց «Հայկական Աշխարհի Կռունկ» ապա վերջին բառը թողնելով միայն «Հայկական Աշխարհ».*

*Հետըն շրջանում «Հայկական Աշխարհը» դառնում է մ ա ն կ ա վ ա ր ժ ա կ ա ն և կ ր օ ն ա կ ա ն.*

*Տպարաններն էնարկէ ամէն քաղաքում փոխվում էնա*

92



*ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՄՍԱԿԱՆ*

ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ
ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**Արմաշ**
**(Նիկոմիդիա)**

*1864—1876*

*Հրատարակութիւն Մրապանական Ուխտին Չարխափան ս. Աստուածածնի*
խմբ. Խորէն վ. Աշըքեան

*Վերջին տարում յանթավերնագիր*
*ԴՐՕՇԱԿ ՀԱՅՐԵՆԵԱՑ*

*Ի տպարանի Վանուց*

*64 էջ, 14 x 23 հ. մետր*

93

## Փ Ն Ջ Ի Կ

*(ՀԱՎԵԼՎԱԾ «ՓՈՒՆՋ» ԼՐԱԳՐԻ)*

**Կ. Պոլիս**

*1864—1866*

խմբագիր Տեօրէն
Համբարձում Այաճանեան

94 **1865**

## ԱՐՄԱՒԵՆԻ

*ԼՐԱԳԻՐ ԿԻՍԱՄՍԵԱՅ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**Կահիրէ** Տնօրէն խմբագիր
*1865* Աբրահամ Մուրատեան
*16 էջ, 31 x 47 հ. մետր*

——

95 **1866**

## ԳԱՐՈՒՆ

*ԱՄՍԱԳԻՐ*

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

**Թիֆլիս** Հրատարակիչ
*1866* Ստեփաննոս աւագ քահանայ Մանդինեանց
*Տպարան էնֆիաճեանց և ընկ.* *էջ 64, 14 x 24 հ. մ.*
*Գլխ. կառավար. փոխարքային Կովկասու*

96

## ԾԻԱԾԱՆ

*ԼՐԱԳԻՐ*

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
*(ՇԱԲԱԹԱԹԵՐԹ)*

**Կ. Պոլիս** Արտօնատէր Գ. Հ. Սուրենեան
*1866—1870* խմբագիր Տնօրէն Կարապետ Զուխաճեան
*ապա* Աւետիս Սուրենեան *և ուրիշները*
*1868—70-ը հրատարակվում էր՝ մերթ հայ և մերթ թուրք լեզվով)*
*1870-ին վերածվեց բացառապես թուրքերենի.*
*4 էջ, 39 x 45 հ. մետր*
*Տպարան Յ. Միւհէնտիսեանի,*
*ապա Ե. Մինասեանի* *4 էջ, 28 x 43 հ. մետր*

97

ԾԻԼՆ

## ԱՒԱՐԱՅՐԻ

Ա. ՏԱՐԻ 1866 ԹԻՒ Թ
ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

